



MA





7

12004

277

5

277

57

5-99 Ն Ո Ր Ա Ն Ի Ս

ԵՓԻՄԵՐՏԵ

ՏՊԱԳՐԵԱԼ

Ի Հայրապետութեան Տեառն
Տեառն ԵՓՐԵՍՆԱՅ Արժան
ընտիր և Աստուածարեալ Կաթու-
ղիկոսի ամենայն Հայոց և Ասպետի:

Յառաջնորդութեան Ռուստիաբնակ Հայոց
Առաքելաշաւիղ Տեառն Ներսէսի Սրբա-
ղան Արքեպիսկոպոսի և Ասպետի:



1834 Ի Մ Ո Ս Կ Ո Վ ու մ ձ : 1831
Ի տպագրատան Հայկական Ճեմարանի
Տեալց Լազարեանց :

52-8891

1975

1944-1949

28207-42

1944-1949

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.



19277-52

187

187

Գ Ի Ր Ք

ԼՅՖԻՄԵՐՏԷ

ԿՈՉԵՑԵԱԼ

Յորում պարունակին համառօտ աստեղա-
բաշխական տեղեկուիք, դուշակուիք փոփոխ-
մանց եղանակայ, բուն տօմար հայոց և հռով-
մայեցւոյ, երազահան, զանազան իմաստուն ա-
ռածք, օգտակար դեղորայք և ծանօթուիք
Ռուսսիաքնակ արքեմիսց հայոց և Յահաչակ
Ճեմարանին Ա Եհազնեայ Տեարց
Լազարեանց :

Ի լոյս ընծայեալ էրիտաւրոմեմէ, արդեմէս
և ծախիւս էրիտայ էղէարց Ա արդան սարիտաւգի
և հանգուցեալ Յովհաննէսի Տէր Յովհաննէսեանց
Կիւմիցայ :



ՀՐԱՄԱՅՆՑԱԹՒ ՏՊԱԳՐԵԼ :

Դատարանն իւր զրոյ Միքայէլ ծայրա-
դոյն Աւրդաստ Սալանթեանց Աս-
տանդնուպօլսեցի Միտքան և Նուիրակ
սրբոյ Էջմիածնի :

Ի 45 Նոյեմբերի . 1830 ամի ,

ի Մոսկուէ :

Ահրել յամենայն սրտէ զհայրենիս իւր, ցանկալ նմին բարիս և տարածել զլոյս նորանոր գիտուեց ՚ի սահմանս նորին, է գործ և պարտաւորուի իւրաքանչիւր ուրուք, որ վայել է զբարիս ազգին իւրոյ : Չէ ինչ՝ եթէ մին կանխադրեալ ՚ի շարս ընտրելոց զառաւել ազնուագոյնն ՚ի ծառայուեց և զմեծագինն ՚ի նպաստից մատուոցէ հայրենեացն . իսկ միւսն զոչ այնչափ սրանճալիս և արժանաւորս իմաստից խոհականաց և գիտնական անձանց : Քանզի յայնժամ, ուն առաջինն ունիցի տեղի ընդունել յազգակցաց զերախոտագիտուի վն մեծիմաստ բանից իւրոց, նոյննս և երկրորդն համարձակի ակն ունիլ թերեւս բարեմասնաւորիլ իւրք վտոն տաժանական ճգանացն : Յայս հայեցեալ և մեր և հաւաստի լեալ թէ ոչ ՚ի դերեւ ելցենն աշխատանք մեր կամեցաք յայսմ նուագի օգնել համազգեացմերոց՝ յայն ինչ յոր հասանէր զօրուի կարեացս, և որ՝ գոլով յոչ վերնագունից, ունէր դարձեալ բերել նոյ գլաւական օգուտս : Առ ՚ի կատար բերել զայս դիտաւորուի մեր, ձեռնամուխ եղաք մեծաւ ջանիւ վերստին ՚ի տալ մուծանել էջիմերտէ

անուանեալ գրքոյկն, որ յաղգի մերում յոգումբք պիտանի լեալ սակաւ յոյժ գտանէր՝ վսյ և փափագողք նորին կամ ոչ կարէին գտանել զայն, կամ թէ և ՚ի ձեռս բերէին սակայն բազում գրամօք: Առաւել ևս առիթ ձեռն ՚ի գործ արկանելոյն մեր եղնն թախանձանք ոմանց իմաստուն հայրենասիրաց, սակս հազուադիւտ լինելոյ վերոյիշեալ էֆիմերտէին: Յայս գործ շարժեաց զմեզ և նորաշէն ապագրատունն հանրահռչակ ճեմարանին Ահազնէից մերոց՝ որ այժմ օրէյօր պայծառացեալ յամ կողմանց և ոչ պակասել իւրք, մատուցանէր զամենայն հարկաւորեալս առ յառաւել գեղեցիկ տիպս արձանացուցանել զմատեանս ՚ի զուարճուի մերազնէից:

Բայց սրնրտ է մեզ յայսմ վայրի առաջի առնել վերձանողաց էֆիմերտէիս, և զփոփոխութիւնս և զյաւելուածս ինչ, որք շահաւէտ թուեցան մեզ մուծանել յայս երկրորդ նուազի տպագրուի նորին: Չի էր բազում ինչ՝ որ գոլով յօրինեալ ՚ի բազում ժամանակաց հետէ, անցեալ էր քան զսահման իւր և ոչ կարէր բերել ՚ի մերում դարու և ոչ մի օգուտս. և էր ևս ինչ ինչ, որ ամենևին չէր յիշատակեալ յայն հին էֆիմերտէի, բայց որ ՚ի մէնջ հարկաւոր համարեցաւ վասն համբալկաց: Յայսպիսի փոփոխուեց առաջինն էր նախ

Մշակույթի նախարար Գրիգորյանի աստիճանի հոգեւորականաց, որ 'ի հին Եփրատեի ձգէր մինչ ցաֆն 1908 . այլ մեք թուեալ զայն զգուշուլ գտաք զգուշա կուֆն մինչ ց1936 ամն և 'ի նորումն եղաք ևս այնպէս : Երկրորդ՝ յաւելաք զՅայանու-թիւն խաւարման արեգակնն և շո-սնի յաֆ 1830 մինչ ցաֆն 1995 . որով ամ որ հեշտեալ կարէ իմա-նալ առանց սխալելոյ զխաւարումն արեգական և լուսնի : Երրորդ՝ ոչ անտեղի համարեցաք մուծանել Եփրատեիս զզանազան դեղորայս վասն ցաւոց որ ստէպ ստէպ պատահին մարդ-կան . զի ամ որ որ ունիցի զգիրս զայս անվրէպ կարասցէ փութով օգնել ախտայելոյն . քանզի և դեղորայքն են այնպիսիք , զոր իւրաքանչիւր որ առանց բժշկի անձամբ անձին օգտիւ կարէ 'ի գործ ածել : Առ այս վերաբերի ևս խրա-տըն վասն խօլերա ցաւոյն , որ 'ի մերձակայ ժա-մանակս անչափ մահուս գործեաց յեւրոպիա : Չորրորդ՝ Համառօտ ծանօթու-թիւն վա-նք երկոց Ռուսոթիւնի հայոց . յորում ամ որ կա-րէ տեսանել զպարզևս շնորհեալս յամենու-ղորմաէրուէն Ռուսաց՝ արժաննտիր Հովուա պետաց մերոց : Հինգերորդ՝ 'ի վախճանի մատե-նիս տպեցաք զՀամառօտ ծանօթու-թիւն վա-նք Հայ-հակն ճեմարանին Տեարց Լազարեանց . և կարի իսկ քաջ . քանզի ում որ մեք 'ի ճշմարիտ հայ-րենասիրաց ոչ է ցանկալի գիտել զհանգամա-

նրա Յահուչակ ճեմարանին՝ յորում քաղմաց որ
 դիք կամ արենակիցք սպայժառանան լուսով
 գիտութեան և Աստուածպաշտութեան . և
 կամ ո՞րք ո՞չ փախազիցէ գիտել զերախտիս քա
 բերարաց բոլոր ազգին հայոց , որք միայն թեր
 ևս ՚ի համայն ծագս երկրի հանդիսացեալ են
 արք ճշմարիտ մեծահոգիք : Որոց առատուի
 բարերարունն ՚ի նորումս ևս ընծայեաց ճեմա
 րանին ՚ի լուսաւորութի ազգին զպանծալի տպա
 րան , որ յեա ժամանակաց ինչ յուսամք թէ
 առաւել քան զառաւել կատարելագործեսցի :

Ահա ամենայն փոխութիւնք և յաւել
 ուածք զոր պատշաճ համարեցաք մեք առնել
 ՚ի նոր տպագրութեան էֆիմերտէիս : Առ
 ջի առնեմք զայս խոնարհաբար սիրելի ազգին
 մերոյ առ ՚ի քաղել ՚ի սմանէ օգուտ ինքեան
 սեփհական :






Եօթն են Աստղք մոլորա
 Կենդանակերպք Երկոտա
 Յորոց հոսին յամենե
 Պէտէս արարք զարմանա

կան ,
 սան ,
 սեան ,
 զան :



Շ Ր Զ Ա Ն

ՄՇՏՆԶԵՆԱՒՈՐ ՏԱՐԵԿԱՆ
ԳՈՒՇԱԿՄԱՆՑ :



Նախնիքսն Բնիկն

Ք Ս Ե Լ Ի Է Զ Բ Ա Յ Բ
Բանասէր՝ զի յայսմ Լստեղաբաշխա-
կան զխոռէ՛ր եղան այլ և այլ աստեղաց ան-
ուանք, քանզի են՝ որք մօլորականք ասին, և են՝
որք անմօլար առձայնին : Մօլորական աստեղք
ասին, որք միշտ փափոխին, և մօլորին ՚ի սեպհա
կան տեղեացն. երբեմն զէսլ ՚ի հիւսիս, և եր-
բեմն զէսլ ՚ի հարաւ . և են թուով եօթն .

- | | | |
|------------|---|---------------------|
| Չօհալ . | ♄ | Երեւակ . արձիճ . |
| Մուշթարի . | ♃ | Լուսնթագ . կլայեկ . |
| Մառեխ . | ♂ | Հրատ . երկաթ . |
| Շհմս . | ☉ | Արեգակն . ոսկի . |
| Չօհրէ . | ♀ | Լուսաբեր . պղինձ . |
| Օտարիտ . | ♁ | Փայլածու . սնդիկ . |
| Ղամէր . | ♁ | Լուսին . արծաթ . |

Եօթն այսպիսի մոլորակք ունին ինքեանց
 ղևակահան ակթոռս, և տուն. ուր ասին գոլ
 հզօրագոյն և իշխանաւոր: Տունք եօթն մոլո-
 րակաց են այսպիսի:

Արեգական տուն է Աբիւճն: Լուսնոյն՝
 Խեցդեակինն: Երևակին՝ Զրհոսն և Այծեղ-
 ջիւրն. Լուսնթաղին՝ Աղեղնաւորն և Չուկն:
 Հրատին՝ Խոյն և կարիճն: Լուսաբերին՝
 Աշխոն և Յուլն: Փայլածուին՝ Երկաւորն
 և Այսն: Իսկ ակթոռ կամ բարձրութիւք Մո-
 լորակաց են. Խոյն Արեգական: Յուլն՝
 Լուսնոյն: Աշխոն Երևակին: Խեցդեակինն
 Լուսնթաղին: Այծեղջիւրն Հրատին: Չուկն
 Լուսաբերին: Այսն Փայլածուին:

Երևակն է արձըճագոյն, յոյժ ցուրտ, և
 միջակօրէն չոր: Ի՛ սկստ այծեղջեր. ուր իսկա-
 պէս իշխէ: Թապաւորէ ընկշոռջ: Տիրէ հո-
 ղայնոց, փայծեղաց, ոսկերաց, ճերուլթն, աշ-
 նան եղանակին, թանձր, թթու և ցուրտ
 լաց: Ի՛ բարեկամ լուսնթաղին, արեգա-
 կան, և լուսնոյն. թշնամի հրատին, և լու-
 սաբերին: Եթէ միայն իշխէ, պտտճառէ զըրժ-
 նեաց ցրտուի, թանձրուի ամառոյ. ուստի մառա-
 խուղ, ձիւն, հողմահոսուի, ալէկոծուի ծովու,
 ֆնաս մրգաց, ճնունդ ղեանոց, սողնոց, որդանց
 և գորտանց. զամս 30 լնու զընթաց իւր:

Լուսնթաղն, որև՛ ֆայլածու ասի, է պայ-
 ճառ, բարեխառն, միջակ խոնաւ, և ջերմ:

Մանաւանդ՝ իշխէ, երբ է՛ յաղեղնաւոր կեն-
դանակերպոջ : Տիրէ արեան, շնչոյ, երկա-
սարդուէ, թորին, կողիցն, անուշուէ, և կար-
մրուէ . ՚ի հնդեաասան աստիճանի խեցեանին
ունի զիւր բարձրուի : Ա՛ բարեկամ երեակին,
արեգական, լուսաբերին և լուսնոյն . թշնամի
հրատին : Աթէ միայն իցէ Տանուտէր տարւոյ՝
նշանակէ զառողջուի՝ դարնան, մրգայ, ան-
դորրուի՝ ծալու, և զաջող նաւարկութիւն .
կատարէ զընթաց իւր զամս իբր 12 :

Հրասն է՛ կարմրուշող, ջերմ և չոր . իշխէ՛
մանաւանդ՝ երբ է՛ ՚ի կարիճ կենդանակերպոջ .
ունի զբարձրագահուի իւր ՚ի 28 աստիճանի
ցլոյն : Ա՛ բարեկամ լուսաբերին միայն : Արբ
տիրէ ուր Տանուտէր տարւոյ՝ պատճառէ սակս
ջերմուէ, և չորուէ՝ զջերմ քամիս, զկայլատա-
կունս, կայծակս, զկատաղուի ալից, զցամաքուի
ջրոյ, և գնուաղուի սրտոյ, կամ վասն խոր-
շակահարուէ, կամ չորուէ և ցամաքուէ, և կի՛
սակս մարտխահարուէ . կատարէ զընթացս
իւր զամս իբր 2 :

Արեգակն, որև (☉), ունի ջերմուի և
չորուի . զբարեխոսն, զլուսաւոր, արական և
բարեբախտ բնուի : Արբ ունի զվեցանկիւնի
և զեռանկիւնի հայեցուած ի լուսնոյն՝ է բա-
րեբախտուի . իսկ երբ հայի ՚ի լուսինն մու-
ղաբիլոյ, թարբիլ, կամ քառանկիւնի հայեց-
ուածով, ևս՝ ծննդեամբն, նշան է վատաբախ-

տուէր : Երբ է՛ ՚ի Խոյն , ՚ի Յուլն , և յԵրկա-
 ւորն , յաւելու զտամհութիւն և զջերմու-
 թիւն . յայսմանէ է Գարունն : Երբ է ՚ի Խեց-
 գեախնն , յառիւծն և ՚ի կոյսն պատճառէ զջեր-
 մութիւն և զչորութիւն այս է ամառն :
 Երբ շրջի յինկշիւս , ՚ի կարիճ և յԱղեղ-
 նաւոր կենդանակերպոջ , պատճառէ զչո-
 բուի , և զցրտուի . և լինի Աշուն : Իսկ երբ է
 յայծեղջիւրն , ՚ի ջրհոսն , և ձուկն յաւելու զցրտ-
 ւուի , և զխոնաւուի , ուստի յառաջանայ Չմե-
 ալն : Իշխէ արիուէ , սրտի , կենդանուէ , աջ
 աչաց , շնչերակաց , և մեղրագունոց . Երբ է
 յիննետաներորդ տատիճանի Խոյնն , տսի լինիլ
 ՚ի Գահոյի իւրում : Բարեկամ է լուսնթա-
 գին , և լուսաբերին , թշնամի հրատին , փայլա-
 ծուին և լուսնոյն : Ունի կենդանագործ բնուի ,
 և երբ բարձրանայ յերկնամիջակ կէտն՝ ամ
 արարածք զուարթանան , կայտալին , ընձիւղին ,
 շառաւիղին , բուսանին , և բողբոջին : Իսկ երբ
 ՚ի սուզական կէտն ցածանայ՝ ամբն թալկա-
 նան , թարշամին , թառամին , նքթին , և նուա-
 զին : Ուղղի՛ չ և լուսաւորի՛ չ է երկնից , ժամա-
 նակաց և տատեղաց , է մեծադոյն Ք զերկիր իբր
 466 անգամ , թանձրուի գնտի Արեգակն ու-
 նի զմղոնս , իբր 339,202 : Շրջան և պարտառուի
 արեգական պարունակէ զմղոնս 2,7364,875 :
 ՚ի բաց կայ յերկրէ իբր զմղոնս՝ 4,353,025 :
 Չիւրաբան չիւր ամ կատարէ զընթաց իւր :

Լուսաբերին, որև՝ արեւելեաց ձայնի, է ցուրտ
և գէջ բարեխառնօրէն: Իշխէ սերմանց, ցան-
կուհց, համոց հոտոց և շօշախմանց, կանաչուե-
և սպխտակուե. թշնամի միայն Երեւակին. է փոք-
րագոյն քան զերկիր, կատարէ զընթաց իւր ընդ-
արեգական, յորմէ ոչ հեռանայ առաւել քան
զՎէ կամ 60 աստիճանս:

Փայլածուն է երկաքնակ. քի ընդ բարեաց
է բարի, և ընդ վատթարացն՝ վատթար. ի
Քաջաբախտից է բարեբախտ, և ընդ Աւ-
տաբախտիցն՝ թշուառաբախտ: Երբ է յա-
րեւելս, ջեռուցանէ. երբ է յարեւմուտս՝ ջո-
րացուցանէ: Իշխէ փոխխմանց օդոյն, և մարմ-
նոյն, և ս յիշողուե, երեւակայուե, լեղուի,
կոկորդի և ջւից: Ե՛ բարեկամ երեւակին,
լուսնթագին և լուսաբերին. թշնամի է արե-
գական և լուսնոյն: Եթէ միայն իշխէ՝ սպա-
ճառէ յամուս զորոտս, զփայլակս, և զկայծակս:
' Ի ծագիլ Փայլածունն՝ առատանան ջուրք-
խակ յաներեւութանայն՝ նուաղին: Ատարէ
զընթաց իւր ի լուսաբերին. ոչ հեռանայ յա-
րեգականէ առաւել քան զերեսուն աստիճանս:

Լուսինն է ցուրտ, և խոնաւ, ջրային, զի-
շերային, խգական և չարահար: Իշխէ մաղ-
ձին, ուղղոյ, կղակին, ձախ աչոյն, փոքրա-
փորին, և այլ տամուկ և ցուրտ իրաց: յԵր-
րորդ աստիճանի Յլոյն ունի զիւր գահ: Ե՛
բարեկամ Երեւակին, Լուսաբերին, և Լու-

սընթաղին. իսկ Հրատին Փայլճոււին, և Արե-
գական՝ է թշնամի: Յաճիլ Լուսնոյն մինչև
ցհնդեասասանն, աճին հիւթք ՚ի ծառս, ՚ի
բոցս և ՚ի կենդանիս. վերանայ, ուռի և վերա-
նայ ծովն. և ՚ի նուաղիլն լուսնոյն, նուաղին
ուռջայեալք: Լ՛հեռի յերկրէ եբբ զմզանս
229,687: Լ՛նու զընթաց իւր եբբ ՚ի 27
աւուրս և յեթն ժամս:

Յազգո անճուրը Լաւեղաց:



ն ևս անմոլար Ատեղք, որք ոչ
փոխոխին, ոչ մոլորին, և ոչ թիւ-
րին ՚ի սեպհական շաւղացն ուղ Մոլորակք.
այլ միշտ՝ զմի և զնոյն ճանապարհ ընթանալով
կատարեն զընթացս իւրեանց: Յայսցանէ կը
կոտասանքն են Գլխաւորք, և ասին Կենդա-
նակերպք. որոց անուանքն են.

Խոյ	Համէլ.	Մ Գլուխ:
Յուլ	Սէվեր.	Յ Պարանոց:
Երկաւոր	Ճեվղա.	Ո Բաղուկ և ուս:
Խեցդեալին	Սէրէթան.	Չ Կուրծ և լծամոր:
Առիւծ	Էսէտ.	Տ Սերտ, փայծեղ:
Կոյս	Սիւմպիւլէ.	ՈՔ Փոքրափոր:
Կշիռ	Միզան.	Ռ Երկիամուկք:
Կարիճ	Աքրէպ.	Ր Ամորձեք:
Աղեղնաւոր	Գալիս.	Տ Ղուռք:
Այծեղջիւր	Ղէտի.	Ծ Ծունկք:
Զրհոս	Պուրջի տէլլ.	Ս Ուղք:
Չուկն	Հութ.	Կ Ոտք:

Խոյն է ջերմ և չոր, հրային, մաղձոտ, արևելեան, արական, ցերեկեայ և դառն ։

Յուշն է ցուրտ և չոր, հողային, սևամաղձ, իզական, միջօրեայ, գիշերային, սուր և թիւր ։

Երկաւորն է ջերմ և խոնաւ, օդային, արիւնտար, արական, արևմտեայ, ցերեկեայ, հասարակ, քաղցր և թիւր ։

Խեցղեաինն է ցուրտ և խոնաւ, ջրային, հիւսիսային, շարժուն, մաղձոտ, իզական, գիշերային, անհամ և ուղիղ ։

Լուսեծն է ջերմ և չոր, հրային, շեկամաղձ, արևելեան, արական, սևեռուն, ուղիղ, ցերեկեայ, գիշերային և դառն ։

Արցան է ցուրտ և չոր, հողային, սևամաղձ, գիշերային, հասարակ, իզական, սուր, միջօրեայ և ուղիղ ։

Աշիւն է ջերմ և խոնաւ, օդային, արիւնտոտ, արևմտեան, արական, դժուար, շարժելի, ուղիղ և քաղցր ։


Աարիճն է ցուրտ և տամուկ, ջրային, մաղձոտ, հիւսիսային, իզական, սևեռուն, գիշերեայ, անհամ և ուղիղ ։

Լղեղնաւորն. ջերմ և չոր, հրային, շեկամաղձ, արևելեան, արական, ցերեկեայ, հասարակ, ուղիղ և դառն ։

Լյճեղջիւրն՝ ցուրտ և չոր, հողային, սևամաղձ, միջօրեայ, իզական, շարժուն, թիւր, գիշերեայ և սուր ։

Զրհան՝ ջերմ և տամուկ, օդային, արիւնտտ, արեւմտեան, արտեան, ցերեկեայ, սեւեռն, թիւր և քաղցր :

Չուկն է ցուրտ և խոնավ, ջրային, մաղձոտ, իգական, գիշերեայ, հասարակ, անհամ և թիւր :



Յաղագս հայեցութեաց Մուշրահաց :

Մրդ՝ Հայեցուած, կամ Նաղագ Մուշրահայն՝ նչ այլինչ է, եթէ ոչ կերպ իմն, որով Մուշրահան Աստեղք յերեարս հային մերձաւորուի իւրք, կամ հեռաւորուի : Հինգ են թուով հայեցուածքն. յի Ծնունդ. Լրումն, Աւցանկիւնի, Քառանկիւնի և Եռանկիւնի հայեցուածք :

Ծնունդն է մերձաւորուի, զուգաւորուի, և կտարակցուի, երբ մի, կամ յոլով Աստեղք ը այլում Աստեղ ՚ի մի և ՚ի նոյն տեղւոջ, ՚ի մի և ՚ի նոյն աստիճանի գտնին. և նշանակի այսն Յ :

Լրումն, կամ Հակադիր, Տրամաչափ, և լրական հայեցուածն հանդիպի. երբ Աստեղք 180 աստիճանօք ՚ի միմեանց հեռանան. Արն. Մուշրահաց ձայնի, որև՛ այսն նշանակի Տ :

Աւցանկիւնի հայեցուածն, որև թասողի տաի, է յարժամ Աստեղք 60 աստիճանօք հեռի կան ՚ի միմեանց :

Քառանկիւնի, Կամ Թարբէշ Կաղար, ասի՝ երբ
90 աստիճանօք ՚ի միմեանց հեռի կան աստեղք:

Եռանկիւնի, կամ Թարբէշ հայեցուած, երբ
120 աստիճանօք ՚ի միմեանց հեռանան աստեղք:

Յայսցանէ Քառանկիւնին է անկատար Թըշ-
նամուէր, և ատելուէ հայեցուած: Իսկ Լըուճի
կատարեալ Թշնամուէր և ատելուէ: Եռան-
կիւնին կատարեալ բարեկամուէր: Ակցան-
կիւնին՝ անկատար սիրելուէ: Ծնունդն՝ եր-
կաբնակ • չԲարեայն է բարի, և չԷ Ատ-
Թարայն վատ:

՚ի հայեցուածոց ոմանք ասին Աջակողմանք
և ոմանք Չախակողմանք: Աջակողմանքն
հային առ յիրեարս ընդդէմ կարգի կենդանա
կերպից • ուղ յԵրկաւորէն ՚ի Խոյն հայել: Չա-
խակողմանքն հային առ յիրեարս ըստ կարգի
կենդանակերպից • ուղ յԵրկաւորէն յառիւծն,
կիմ ՚ի կոյն և ՚ի կշիռն: Աջակողմանքն ու-
ժեղագոյնք են Ք ղ ձախակողման հայեցուածս:

Հայեցուածս 12. Աենդանակողմէն •

Խոյն հայի ՚ի ջրհուն վեցանկիւնի, յայժեղ-
ջիւրն քառանկիւնի, յաղեղնաւորն եռան-
կիւնի հայեցուածով: ՚ի ձախ կոյս՝ յերկա-
ւորն վեցանկիւնի, ՚ի խեցգեղնն քառանկիւնի •
և յառիւծն եռանկիւնի հայեցուածով • Իսկ
՚ի կշիռն հակադիր և լրական հայեցուածով:

Յոււլն հայի յաջկոյս՝ ՚ի ձուկն վեց, ՚ի ջրհոսն՝
քառանկիւնի, և յայժեղջիւրն եռանկիւնի հա-
յեցողութիւն : ՚ի ձախ կոյս հայի ՚ի խեցդեակնն
վեց. յառիւծն, քառ. և ՚ի կոյսն եռանկիւնի .
խիկ ՚ի կարիճն հակադիր հայեցուածով :

Երկաւորն հայի յաջկոյս՝ ՚ի խոյն վեց, ՚ի ձուկն
քառ, և ՚ի ջրհոսն եռ : ՚ի ձախկոյս՝ յառիւծն
վեց, ՚ի կոյսն քառ, և ՚ի կշիռն եռ. խիկ յաղեղնա-
ւորն լրական հայեցուածով :

Խեցդեակնն հայի յաջկոյս՝ ՚ի ցուլն վեց, ՚ի
խոյն քառ. և ՚ի ձուկն եռ : ՚ի ձախկոյս՝ ՚ի կոյսն
վեց, ՚ի կշիռն քառ. և ՚ի կարիճն եռ. խիկ յայ-
ժեղջիւրն հակադիր և լրական հայեցուածով :

Առիւծն հայի յաջկոյս՝ յերկաւորն վեց,
՚ի ցուլն քառ. և ՚ի խոյն եռ. ՚ի ձախկոյս՝
՚ի կշիռն վեց. ՚ի կարիճն քառ. և յաղեղնա-
ւորն եռ. խիկ ՚ի ջրհոսն լրական հայեցուածով :

Աոյսն հայի յաջկոյս՝ ՚ի խեցդեակնն վեց, յեր-
կաւորն քառ. և ՚ի ցուլն եռ : ՚ի ձախկոյս՝ ՚ի կա-
րիճն վեց. յաղեղնաւորն քառ. և յայժեղջիւրն
եռ. խիկ ՚ի ձուկն լրակի և Մո-շ-Էն-Յ հայեց-
ուածով :

Աշիռն հայի յաջկոյս՝ յառիւծն վեց, ՚ի խեց-
դեակնն քառ, և յերկաւորն եռ : ՚ի ձախկոյս՝
յաղեղնաւորն վեց, յայժեղջիւրն քառ, և ՚ի
ջրհոսն եռ. խիկ ՚ի խոյն հակադիր և լրական
հայեցուածով :

Կարիճն հայի յաջկոյս՝ ՚ի կոյսն վեց, յառիւծն

քառ և ՚ի խեցդեակնն եռ: ՚ի ձախկոյս՝ յայժեղջիւրն վեց, ՚ի ջրհուն քառ և ՚ի ձուկն եռ. խկ ՚ի ցուլն լրակի և հակադիր հայեցուածով:

Աղեղնաւորն հայի յաջկոյս՝ ՚ի կշիռն վեց, ՚ի կոյսն քառ և յառիւծն եռ. ՚ի ձախկոյս՝ ՚ի ջրհունն վեց, ՚ի ձուկն քառ, և ՚ի խոյն եռ. խկ յերկաւորն լրական հայեցուածով:

Այժեղջիւրն հայի յաջկոյս՝ ՚ի կարիւճն վեց, ՚ի կշիռն քառ, և ՚ի կոյսն եռ: ՚ի ձախկոյս՝ ՚ի կոյսն վեց, ՚ի խոյն քառ, և ՚ի ցուլն եռ. խկ ՚ի խեցդեակնն լրական հայեցուածով:

Ջրհուն հայի յաջկոյս՝ յաղեղնաւորն վեց, ՚ի կարիւճն քառ, և ՚ի կշիռն եռ: ՚ի ձախկոյս՝ ՚ի խոյն վեց, ՚ի ցուլն քառ, և յերկաւորն եռանկիւնի. խկ յառիւծն լրական հայեցուածով:

Չուկն հայի յաջկոյս՝ յայժեղջիւրն վեց, յաղեղնաւորն քառ, և ՚ի կարիւճն եռ: ՚ի ձախկոյս՝ ՚ի ցուլն վեց, յերկաւորն քառ, և ՚ի խեցդեակնն եռ. խկ ՚ի կոյսն լրական և **Մ**արտիկն հայեցուածով:

Խոյն՝ **Ա**ռիւծն և **Ա**ղեղնաւորն՝ հրայինք են. արականք և ցերեկեայք, ջերմ և չոր. են ընդ իշխանութիւնս **Ա**րեգական և **Լ**ուսնթաղին:

Ցուլն, **Ա**րոյսն և **Ա**յժեղջիւրն՝ են հողայինք, խգականք և գիշերեայք, ցուրտ և չոր. թ իշխանութիւնս **Լ**ուսնոյն, և **Լ**ուսաբերին:

Երկաւորն, **Ա**շիռն և **Ջ**րհունն՝ են օդայինք. արականք և ցերեկեայք, ջերմ և խո-

նաւ . Ը իշխանուք Երեւակին և Փայլածուն :
 Խեցզեւոն, Կարիճն և Չուկն՝ են ջրայինք ,
 Եղականք , և գիշերեացք , զուրտ և խոնաւ . Ը
 իշխանուք Հրատին, Լուսաբերին և Լուսնոյն :
Անդանատեսակ Գօտին յերկոտասան զու-
 գահաւատար մասունս բաժանի . և այսոքիկ մա-
 սունք՝ կոչին նշանք , և կենդանակերպք , զի ձեա
 կերպնն զպատկերս կենդանեաց : Իւրաքանչիւր
 կենդանակերպ ունի զերեսուն մասունս բա-
 ժինս , կամ աստիճանս , և զԵրիս Տասնապետ
Մոլորակս՝ այսու կարգաւ , սկսեալ ՚ի Խոյէն :
 Խոյի առաջի 10 աստիճանք՝ են Հրատին .
 երկրորդ 10 աստիճանքն՝ արեգական . երրորդ
 10 աստիճանք՝ են Լուսաբերին :

Ցուլն ունի առաջի Տասնապետ զՓայլա-
 ծուն . երկրորդ՝ զԼուսինն . երրդ՝ զԵրեւակն :
Երկաւորին առաջի տասնապետն է՝ Լուսն-
 թագն . երկրորդ՝ Հրատն . երրդն՝ Արեգակն :
 Խեցզեւանոյն առաջինն է Լուսաբերն . 2 Փայ
 Լածուն . 3 Լուսինն :

Առիւծոյն առաջինն է՝ Երեւակն . 2 Լուսն-
 թագն . 3 Հրատն :

Կուսին առաջինն է՝ արեգակն . 2 . Լուսա-
 բերն . 3 . Փայլածուն :

Աշուն առաջինն է՝ Լուսին . 2 Երեւակն . 3
 Լուսնթագն :


Կարճին առաջինն է՝ Հրատն . երկրորդ՝
 արեգակն . 3 Լուսաբերն :

Աղեղնաւորի առաջին Տաննապետն է՝ Փայ-
լածուն . 2 Լուսինն . 3 Երեւակն :


Այժեղջեր առաջին է՝ Լուսնթագն . 2 Հրա-
տըն . 3 Արեղակն :

Զրհստի առաջին է՝ Լուսաբերն . 2 Փայ-
լածուն . 3 Լուսինն :

Չկան առաջին Տաննապետն է՝ Երեւակն .
Երկրորդ՝ Լուսնթագն . Երրորդ՝ Հրատն :



Յ-ը-4- Երէն-յն Համասեղո-թեան :

ամատեղութիւն և Աստեղաբաշխակն ձեւա-
կերպութիւն բեւեռել աստեղաց առ հինս
էին 48 . խկ առ նորս՝ են 73 : Որոց երկուստ-
սանքն ասին Չողխակոսեանք, զորս մեք կոչեմք
(Անդան-էրոյ) : Երեսուն երեքն կոչին Հարս-
ւայինք . և քսանեութիւն Հիւսիսայինք : Ան-
ուանք իւրաքանչիւրոց, կարգն և ՚ի քանի ա-
տեղաց բաղադրելն ցուցանին յետակայք :

Երէնստան Համասեղո-թեան Չողխակո-
սեանք . որս նա կոչին Անդան-էրոյ :

Խոյն Պ կազմի և բաղադրի ՚ի 20 աստեղաց-
որոց վեցքն են պայծառք և երեւելիք : Յուլն
Ց կազմի ՚ի 53 աստեղաց, որոց 12 են պայ-
ծառք : Երկաւորն Ո՛ 33 . պայծ . 43 : Խեցդե-

տինն Տ 44. պայծ. 8: Առիւծն Ո 44. պայծ.
 12: Կոյսն ՊՔ 50. պայծ. 9: Կշիւն Ռ 17. պայծ.
 8: Կարիճն Մ 36. պայծ. 14: Աղեղնաւորն Ճ
 32. պայծ. 12: Այծեղջիւրն Շ 35. պայծ. 12:
 Զրհոսն Ձ 86 պայծ. 10: Չուկն Կ 66. պայծ. 9:

Ի Թողեալ 64 Համարեղոր-Թեանց 33 Հո-
 շին Հարա-այլնք. ինչ 28՝ Հիւսիսայինք. Խ Թե
 ՚ի Կանի ասեղաց Էսղէմնան, ցուցանի ՚ի Թուագրոց:

Հարա-այլնք	33 .	Հիւսիսայինք	28 .
Ահա Չուկն .	38 :	Փոքր արջ .	48 :
Հայկ .	63 :	Մեծ արջ .	39 :
Երասխ .	45 :	Ալիշապ .	38 :
Նապաստակ .	43 :	Կեփէոս .	33 :
Մեծ շուն .	49 :	Ընձուղտ .	29 :
Աղաւնի .	44 :	Յորդանան .	34 :
Շնիկ .	44 :	Արջական .	37 :
Միեղջերու .	23 :	Պաա կ հիւս .	49 :
Օձ ջրային .	55 :	Աահազն .	53 :
Տակառ .	44 :	Քնար .	47 :
Ագռաւ .	44 :	Տիգրիս գետ .	37 :
Խաչ .	4 :	Կարապ .	44 :
Չիացուլ .	35 :	Գաւազան .	45 :
Գայլ .	24 :	Կասսիոպէ .	38 :
Սեղան .	9 :	Պէրսէոս .	45 :
Պասկ հարաւ .	42 :	Կառալար .	44 :

Չուկն հարաւ .	17 :	Օձակալ .	27 :
Կուսնկն .	43 :	Օձ .	44 :
Փիւնիկ .	45 :	Նեա .	8 :
Հնդիկ .	43 :	Լրծուի .	24 :
Սիրամարդ .	45 :	Լնտինոս .	42 :
Հնդկացի .	42 :	Դլբին .	44 :
Ճանջիւն .	5 :	Փոքր ձի .	7 :
Գետնառիւծ .	40 :	Երկար .	22 :
Եւանկիւնի հւ .	5 :	Լորոմեղ .	34 :
Չուկն թուոյ .	8 :	Եւանկիւնի հիւս .	15 :
Թրածուկն .	6 :	Շուշան .	7 :
Լմոյ մեծ .	3 :	Բերինիկեան .	42 :
Հաւալուսն .	9 :		
Հիդրայ .	43 :	Ուրեմն ամ Համաս .	
Լմոյ փոքրիկ .	3 :	տեղու թիւնք այսօրիկ	
Քառանկիւնի .	4 :	կողմին ՚ի 1332 աւ .	
Նաւ արդոսեան .	56 :	տեղաց :	

Յազմօ խաւարմանն Լրեփմէն եւ Լուսնոյ .

Որ ոք ցանկաց զխտել զխաւարուքն արեւ-
դական եւ լուսնոյ, թէ զընչ իցէ . զի-
տասցէ նախ՝ զի արեգակն մեծադոյն է քան
զերկիր 466 անգամ, կի՞ փոքր ինչ աւելի: Լու-
սինն է փոքրոգոյն ք զերկիր 39 անգամ, կի՞ աւելի:
Երկրորդ՝ արեգակն է լուսաւոր եւ լուսա-



տու մարմին 'ի մէջ վեց մուրակաց' բաշխէ
 զլացս աստեղաց, մանաւանդ լուսնոյ . որ է լու-
 տագօտ, լուսազուրի, և լուսառու յարեգականէ:

Երրորդ գիտացիք՝ զի նմ լուսատու մարմին՝
 երբ լուսաւորէ զայլ քան զինքն փոքրագոյն
 մարմին, որ իցէ անլուսանցոյց և խաւարամած .
 որքան մերձ գայ առ խաւարչուտ մարմին՝ այնք
 մեծ բաժին խաւարչուտ մարմնոյն լուսաւորի .
 և 'ի յետկոյս անլուսանցոյց մարմնոյն պատճա-
 ռի նուրբ պիրամիդեաց ստուէր : Իսկ որքան
 'ի միմեանց հեռանան մարմինքն երկօքեան՝ լու-
 սատուն և լուսաւուն . այնքան փոքր մասն խա-
 ւարչուտ մարմնոյն լուսաւորի . և այլ թանձր
 ստուերածուծիւն պատճառի : Իսկ երբ լուսա-
 տու մարմին ինչ լուսաւորէ զայլ քան զինքն
 մեծագոյն մարմին, որ իցէ լուսառու և անլու-
 սանցոյց . որքան միմեանց մերձ կան մարմինքն
 երկօքեան, այնքան փոքր մասն անլուսանցոյց
 մարմնոյն լուսաւորի, և յետուտ լուսառու
 մարմնոյն պատարուն և թանձր ծայրսուր ըստ-
 ուեր պատճառի . Ե. ԵԼ՝ որքան յիրերաց հեռա-
 նան լուսատու և լուսառու մարմինքն, այն-
 քան մեծ բաժին խաւարչուտ մարմնոյն լուսա-
 ւորի . իսկ յետկոյս անլուսանցոյց մարմնոյն
 լինի սուղ նուրբ և պիրամիդեաց ստուեր . ցի
 հրաձև, բոցաձև և ծայրատուր շուք :

Երգ՝ արեգակն ուրեք ուրեք 'ի ժամու
 ճննդեան լուսնոյն՝ ստուերածին խաւարու

ըմբռնի երբեք մասամբ իւրիք. բայց ոչ ուրեք և ոչ երբեք բոլորովումբ. Չի լուսինն փոքրագոյն դուրս քան զերկիր ոչ կարէ բոլորովին բառնալ յերկրէ զշառաւիղս արեգական. Արեգակն ուրեքն (որ է ակն լուսնոյ և արեու), ինքն ինքնն ոչ երբեք խաւարի. այլ յորժամ լուսինն՝ ՚ի ժամ ծննդնն հուսլ Գըլտոյ, կի՞ Տոյ Ա իշապին, տրամադծօրէն, և ուղղակի ՚ի ներքոյ արեգական գտանի՝ զիւր թանձրամած և զանլուսանց մարմինն միջարկէ չգէմ արեգական և երկրաբնակաց. որով նոյն ինքն խաւարչուա լուսինն՝ ինքնաբուն խաւարուն խաւանէ զանց արեգակնային շառաւիղացն ՚ի վր երկրաբնակաց ոմանց, բայց ոչ երբեք ՚ի վր ամնն. և այսն՝ արեգակն մ թանայ, նսեմանայ, ստուերանայ և խաւարի, ոչ ինքն լւ ինքնն այլ միայն ելևի երկրաբնկց ոմանց: Խաւարումն ուրեքն արեգական է ուղղագից միջարկուի լուսնոյ ՚ի մէջ մեր, և արեգական: Խաւարումն լուսնոյ է ուղղագիծ միջարկուի երկրի ՚ի մէջ արեգական և լուսնոյն: Քանզի լուսինն ՚ի ժամանակի իւրոյ լուման երբ տրամադծօրէն և ուղղակի ՚ի ներքոյ արեգական և երկրի գտանի. երբեքն բոլորովին, և երբեքն մասամբ իւրիք խաւարի: Չի արեգակն, որ միշտ անշեղօրէն թաւալի ընդ կենդանակերպեայ գօտուջ, լուսաւորէ զկիսագունդն երկրի. երբեքն առաւել և երբեքն նուազ: Իսկ այլ մնայնլ կիսագունդն

երկրի որ է հսկակայ, և դէմ յանդիման շա-
 ռաւիլայն արեգական, արձակէ զպիրամիտեայ,
 բոյաձև, և զծայրասուր ստուերն իւր մինչ
 ցկամարն լուսաբերի: Արդ՝ լուսինն հեռա-
 ցեալ յարեգականէ վեց կենդանակերպիւք. իմ՝
 180 սասիճանօք, եթէ իցէ ուղղակի հանդէպ
 արեգական, բայց չիցէ մերձ գլխոյ, կամ տոոյ
 վիշապին՝ ոչ խաւարի: Եթէ իցէ լուսինն մերձ
 գլխոյ, կիմ՝ տոոյ վիշապին՝ խաւարի: Որքան մերձ
 գլխոյ կիմ՝ տոոյ վիշապին իցէ, այնքն մեծ երևի
 խաւարումն լուսնոյն: Ի ձմերան եղանակին՝
 սուղ, և յամարան ժամանակին երկար լինի
 խաւարումն. և յորժամ արեգակն իցէ ի գլխոջ
 և լուսինն ի տոոջ վիշապին և հակադարձօրէն
 արեգակն ի ընդ տոոջ և լուսինն ի գլխոջ վի-
 շապին. յայնժամ լուսինն բոլորովին խաւարի:
 Չի լուսինն բոլորովին մտանէ, ընկզմի, և սու-
 զանի ՚ի թանձրմիճ տոուերն կիսագնդի զորև, իմ.
 զկողմն կիսագնդին, որ է դէմ ի դէմ շառաւի-
 ղայն արեգական, ձգէ, արձակէ, և հասուցանէ
 մինչև ցկիմն լուսաբերի: Երկքն չիւր ստուերն
 խաւարումն, եթէ արեգական և թէ լուսնոյն
 ոչ հանդիպի, եթէ ոչ մերձ գլխոյ, կամ տոոյ
 վիշապին. իմ՝ յերկուս կէտս, ՚ի կիրճս և ՚ի կասր
 արեգակն շաւղին, զորս կարէ ի մէջ հաւասար-
 ընթաց բոլորակն լուսնոյ: Ահան այն՝ զոր
 լուսնոյ անուաձև բոլորակն կարէ ի մէջ, և
 բարձրանայ ՚ի հիւսիս կոյս՝ ասի, կիրճ, կասր, և

սօղքն կն պատրելք, և կամ տեսեալքն ոչ էին ճշմարիտ տտաւարք, այլ միայն նոր երևեալ աստեղք ոմանք :


Արդ՝ չորս իւրք նկատին ՚ի տտաւորն. յի ձև, շարժուեալ, գոյն և նշանակութիւն: Չեն այլայլի լի լի տրամադրուէն նիւթոց, որք յատկանց հաշուին երեք: Քանզի նրբագոյն նիւթն՝ որ կացուցանէ զերկար հերս տտաւորին, մինչ միակերպ կարկառի, յայնժամ ասի տտաւոր: Եւ մինչ տարածեալ ՚ի գոլորշեաց ՚ի մի կողմն՝ հանգոյն մորուաց, յայնժամ ասի մորուաւոր: (Թէպէտ ոմանք զայսօսիկ զերկուս ոչ զանազանեն ՚ի միմեանց): Նաև երբեք շուրջ զմարմնով տտաւորին ամբին յամենայն կողմանց նրբագոյն գոլորշիք ըստ կերպի հերաց. յայնժամ ասի վարսաւորել, կի՞ գլխաւորել: Գոն նաև այլ բաղում ձևք տտաւորաց. ոն ասեն աստեղագետք:

Շարժուեալ տտաւորաց մանաւանդ է՝ յարևելից յարևմուտ: Քանզի որովհետև կն ՚ի վերնագոյն մասն օդոց, յախշտակին մշտկաց շարժմամբն հաստատուէ, որոց ուժգնուին հասանի մինչ ցգաւառն օդոց: Բայց երբեք վերանան և կորնան, նաև հակին առ բևեռան. լի որում պահանջէ յօժարուի նոցին՝ առ ՚ի խնդրել զնիւթ: Գոյնն տտաւորաց՝ է զանազան լի յատկուէ նիւթոց նոցին. ոն և ՚ի մեզ զանազան է գոյնն բոցոց, լիմ այլի ՚ի զանազան

նիւթոյ: Ուստի ունի բոցն իերևի ՚ի ծծմբոյ
 կապոյտ. ՚ի ռեանոյ՝ սեւաւ. և ՚ի մաքուր իւզոյ՝
 սպիտակ: Այսպէս և ս՝ այն տառուորք, որք ունին
 զհաստ և զմառախլոնցոս նիւթս, երևին տգեղ:
 Որք ունին վնիւթ անօսր՝ երևին արծաթագոյն:
 Եւ այնք՝ որք թէն ունին զնաւք նիւթս, բայց
 խառնել զոլով լի միգական գոլորչնց՝ տեսնին
 արիւնայինք. լի նշանակուեն Փլինոս կողէ զնս
 զարհուրելի ասակոք, որք նշանակեն զալէկո-
 ծուխ, զհողմունս, զվախամունս կացուեց, և
 զայլ ձախողակի ստոսհմունս: Եւ այսորիկ գու-
 շակիլ կարեն ՚ի յերևիլն տառուորին. մասն ինչ
 բնականաբար, և մասն ինչ ՚ի բարեհաճուի ան:

Բնականաբար. քանզի տառուոր աստղն սնու-
 ցանի ՚ի յոլովուի պարարտ տամկացուեց և
 գոլորչնց: Եւ նովին ծծէ զպարարտուի երկ-
 ըի. նաև ծախէ և վառնէ զայն տամկացուխ,
 որք լի ամպոյ և լի սնծրեային ջուրոյ խառնեալ՝
 պարտ էին սրաղաբեր առնել զերկիր, յազազո
 որոյ պատճառէ զամլուի: Եւ չորագոյն մո-
 սունք այսպիտի տամկացուեց և գոլորչեաց
 դառնան ՚ի հողմունս և ՚ի մրրիկս, յորոյ ծնա-
 նին ալէկոծուիք: Իսկ այն գոլորչիք, որք են
 հաստագոյնք՝ ապականեն զօդն, յորմէ հիւան-
 դուիք և մահք հետևին: Նաև յորժմ՝ յառաջ-
 ածի տառուորն, նշան է՝ թէ լիլիկ ջերմ և չոր
 տառ, յորմէ գրգռին մաղձոտ մարդիկ. վն ծը
 նանին կռիւք և պատերազմունք: Եւ զի այնքան

այլայլուքն բնուէր ածէ ևս ՚ի մարդիկ զայլայլ-
մունս և զփոփոխմունս խոնաւուրց, յօժարուրց
և ջանից. ուստի հետևի ցանկուի փոխելոյ զկա-
ցուին, նաև ճնանին փոփոխուիք թագրուրց բա-
րուց. և ՚ի բարեհաճուէն ան, որ զայսպիսի գիտ
ուածս նախագուշակեն տաւորքն, և մանա-
ւանդ զմահս մեծամեծաց, որք գուշակեն
թարց ուրուք ճշմարիտ բնական հիման :
Աս զի այս ներհակ է օրինաց բնուրց, թէ վս
էր արդեօք մահաբեր գոլորշիք՝ մանաւնդ ըզ
թագաւորս և զիշխանս մեռուցանէն, ք զայլ
մարդիկ : Չի որպէս ընտրեաց Աճ զերկ-
նային աղիզն ՚ի նշան հաշտուէր և ուստի ՚ի մէջ
երկնի և երկրի. այսն պնշաճ տեսանի, զի զայն
նշանս զարհուրելիս, որպիսիք են տաւոր աս-
տեղքն, աւնու ՚ի նշան բարկուէր իւրոյ, և
սաստիկ պատժոցն : Չորև ցուցանէ մար-
գարէն Դաւիթ յասելն. (Սաղ. 59. 6):
Երբ ք իրէն զմծոց հոց նշան. զի սպրեոցն յե-
րեոց աղէշան : Նաև ասէ Յօհան Դամասկա-
ցին թէ՛ յառաջ քան զաւերումն երուսաղէ-
մի՛ երևեցաւ տաւոր աստղ ինչ, որև տեւաց
երկար ժամանակս, նախագուշակ սպաւնի
սրածու թեան :





У С Т В Р З Д Е Ж З



Ազգի՛ հարգեցողութեամբ զՄշտնջեն-
 անք Տարեհան քրդոն՝ յանց Գուշահան:


՝ Ի Թ Ո Ւ Ի Ն Ք Ր Ի Ս Տ Ո Ս Ի :

1797: 1825: 1853: 1884: 1909:



Երբ ՚ի 24 Մարտի Արեգակն յառաջին
 կէտն խոյլն մտանէ, Տարւոյ իշխանն
 լինի Մուշթարին լը նշանաւ առիւծոյ, որ է
 տուն արեգկն: Յառաջիկայ տարին լինի յոյժ
 պարարտ և առատ ցորենով, ձիթով, դինեաւ,
 սպրշմու, ձկամք և այլ ամ մրդօք: Սկիւզն
 ձմերան լինի ցուրտ լը կարկտովք մէջն ջերմ.
 վերջն բարեխառն: Գարունն ցուրտ և անձ-
 րեային մինչ ցյունիս ամիսն: յԱմառան անձ-
 րեք և որոտք սրահասին ջուրք յաղբերաց. վնկ
 մեռանին բզի՞ կղինք: Աշունն առատացուցանէ
 զգետս: Ասէ Գեմակրիտոս՝ թէ երևին հիւան-
 դուիք: զԱ՛ճ աղաչեացուք՝ զի չիցէ մահարժմ.
 Լեր սակաւակեր և սրբ առատօրէն զգինի:
 Ասէ ևս նոյն իմաստասէրն՝ թէ լինի կռիւ:
 Յայտմ ամի ցուցանի ևս թէ՛ Թագաւորն

այլադրեաց 'նեղի և վշտագ'նի յոյժ 'ի թշնամեաց, գուցէ և 'ի նոցանէ մեռանիցի հանդերձ մեծաւ հարուժով և կորստեամբ զինուորացիս Երեւակն յերաներն իւր և քառանկիւնի հացեցողութեն ը Մուշթարւոյն ցուցանէ զարիւնահեղ պատերազմունս, վնկ մարդիկ անձկանան և սրանեղին 'ի թագաւորէն իւրինց. ցուցանէ ևս զվտանդս թագբոյ, զվէճս, զխռովութիս և տարածայնութիս. նաև զփասս 'ի վաճառականուն :




1798: 1826: 1854: 1882: 1910:

Իմտանել արեդական յառաջին կէտն իոյի 'ի մարտի 21. իշխան տարւոյն լինի լուսաբերն ընդ կոյս նշանաւ, որ է տուն վայլածութիւն: Տարիս այս լիցի ամէնուստ և յոյժ պարարտ. առաւել 'ի դաշտաւէտ տեղիս՝ ք թէ 'ի լեռնայինս. զի մայրնց սպառնայ կոյսն զժանկ և զթրթուր: Գինին տարկանի և պակասի. 'իմաւ անատակն գինւոյ՝ բարւոք է յետի քաղել զխաղողն. Միք զբք ծառոց առատանան. թռչունք պակասին: Սկիզբն ձմերան լինի միջակ և անձրևային. մէջըն մնայլ. վերջն ցուրտ: Գարունն բարեխտան և գէջ: Ամառն յոյժ ջերմ: Աշունն ցրտապաղ և ցուահար, մանուանդ տղայոյ աչա ցաւուի հանդիպի: Աս նաւարկուէ տջողակ է

և լաւ • լինին պատերազմուէք, հարուածք ծե-
րոց և չորքոտաւի անտանոց: Դիմեկըխաէս ասէ
թէ՛, եզիցին մնասակար կարկտահարուիք: Աղա-
ջեացուք զԱ՛ճ, զի մի լիցի երկրաշարժութիւն:


Յայսմ ամի երևին դառնաշունչ կոխք և կո-
տորած մարդոց: Թաղաւորն և իշխանք անիրա-
ւութիւն զիցեն ՚ի վր ռամկաց զճննելիք հարկս. յա-
րիցեն բզի՞ արք վատթարք և փճուէք, ըստ
նշանակեն արեգակն հակադէիր հայեցուածով ի
Հրատին, և Չօհալն յանկնն տաննելի տան
երկնից: Աւ Քզի Հրատն դտանի հակադէիր հա-
յեցուածով ի արեգական, և յերբորդում տան
երկնից, և թաւղուքն է յերեկնայ, վնկ յուցնի
լինիլ արիւնհակ պատերազմի և անհնազան-
դուէր առ թագըս, և կորստնն միոյ ուրուք թա-
ղաւորուէ: Տեսնին ևս վէճք, խռովուիք և վե-
ճաբանուիք, որք լինին ՚ի մէջ եղբարց և բա-
ցեկամայ, ընկերաց և բոլոր տան նոցա:



1799: 1827: 1855: 1883: 1914:

Իշխան տարւոյս լինի Երևակն ի Աոյս նշա-
նաւ, որ է տուն Փայլածուին. երբ ՚ի 21 մարտի
արեգակն մտանէ յառաջին կէտ խոյին: Միջակ
լինի այս տարի ամ ինչ • բայց վն զօրուէ կու-
սին՝ ասկանի ժանկ և թրթուր ՚ի սերմանիս, է
վտանգ, և կասկած ՚ի նաւարկուէ: Ակիբն ձմե-

րան լինի ցուրտ կարկառու հանդիճ. մէջն ջերմ,
վերջն քաղցր: Գարունն լինի ցուրտ մինչև
ցտենիս ամիսն: Գեմոկրիտոս ասէ՝ թէ յաշ-
նան թանձրանան գետք, և լինին հիւանդուէր,
յի երեքօրեայ տենդք: Յայսմ ամի բաղմանան
աւազակք, և որք ծնան ՚ի ներքոյ զօհալին, ու-
նիցին գիտքք հաւատ և բարեպաշտուի. ուն զօ-
հալն յիններդում ասն երկնից ցուցանէ: Աւս
հրատն կցել չ մուշթարւոյն, և յեօթներորդ
տան երկնից՝ ցուցանէ լինիլ սաստիկ կռուոյ և
կատրածոյ. մեռանին մեծահամբւ և հարուստ
որք. բայց տարին լինի քաղցր: Գարձնէլ՝ լու-
սաբերն յեօթներորդում անկեն երկնից՝ ցու-
ցանէ զաջողուի կանանց, և իղաբարոյ արանց:




1800: 1828: 1856: 1884: 1912:

Յայսմ ամի՝ երբ ՚ի մարտի 24 արեգակն մտա
նէ յառաջին աստիճան խոյին, իշտէ արեգակն
չ Աշիւ նշանաւ, որ է տուն լուսաբերին: Յա-
ռաջիկայ ամի լինի ամէնառատ. բայց վս զօրուն
կշտին՝ գուշակի սպականուի պտղոյ. հարուստ
մարդկային մտքոյ և սրտերաղմ: Իսկ առա-
տուի մեծ ցորենոյ, ձիթոյ, գինւոյ, սպրշմի և
այլ ամ մրդայ. սկիզբն ձմերան լինի ցուրտ
հանդերձ կարկառու, և վերջն բարեխառն: Գա-

բունն ցուրտ մինչ ց յ յունիս ամիսն. լինին անձ-
 րեք, կարկուտք, և չորուի. մեռանին բազում
 եղինք: Ասէ Դեմոկրիտոս՝ թէ գիտին լաւ և
 մաշտական լինի: Տարին աջողակ ջրելոյ զորթս
 և պճնելոյ զսարտեղս: Ըստնայ մարտին. գու-
 շակի սրտերազմ: Յայսմ ամի՝ տեսանին պա-
 տերազմունք, ամբօրք. հրկիզուէք, տարածայ-
 նուիք և չարուիք. թշուարուէք և պղտօրուի-
 կրօնից, և կրօնաւոր կարգաց, ՚ի մարդիկ այլև-
 այլ տրտմուէք. ըստմ՝ ցուցանէ մեծ կցորդուին
 զօհայլին և մուշթարւոյն, որ եղև ՚ի 24 գեկ-
 տեմբեր ամսոյն, ՚ի հրացին կենդանակերպն
 Այստքիկ կցորդուէք, կմ՝ ճնունդք զմեծ վնաս
 նշանակեն, և զիսիւս հաստատու. ուրախ մարդց
 վատթար մահս: Աշանակի ևս այսու ճննդեմք
 այլևայլ ատելուի և դաւ ՚ի մէջ իշխանաց,
 որով փոփոխին իշխանուէք նոյս: Ալ այս
 լինի ՚ի փոփոխուէ յիշեալ ճննդոց ՚ի ջրայ-
 ին եռապատկուէ ՚ի հրայինն. որ է յոյժ չա-
 բափնաս, զի մարդոց լինին բազում և զանազան
 վնասք: Ալ զի ֆրանցիս է ը իշխանուք մուշ-
 թարւոյ, այսր տղապաւ՝ անկինի նա ՚ի յոյով վը-
 նաստ: Ալ զի հրտան գտանի յառաջնում տան
 երկնից, է նշան՝ զի յայսմ ամի լինի՝ մեծ ա-
 րիւնհեղուի: Առսինն մերձենայ ՚ի մարմին զօ-
 հայլին. ցուցանի մահ մեծ ի տիկնոջ. հիւադուի
 Եսկայ՝ պատճառել ՚ի ջերմուէ և ՚ի խանաուէ,
 զլիսայաւուի. ցաւ կանանց և այլ ամին նման

ցաւք: Թողաւորք և իշխանք յարկցեն ըդէմ
միմեանց և ռամկաց, ժողովուրդք ամբոխին.



1801: 1829: 1857: 1885: 1913:


Երբ արեգակն 'ի 21 մարտի մտանէ յառա-
ջին կէտն Խոյլի. իշխան տարւոյն լինի հը-
րանն ի կշիռ նշանաւ, որ է տուն լուսաբերին:
Այ տարին երևի ցամաք և ստերջ: Սկիզբն
ձմեռան լինի ցուրտ, ջրային ի սաստիկ հողմով,
յորնէ արմատարի խլին ծառք. մէջն բարեխա-
ռըն. վերջն ցուրտ: Գարունն անձրևոտ: Յա-
մառան չորանան գետք և սգակտին խոնաւուիք.
Աշունն եղեմնխտր: Պարտ է սակւ հայ ուտել
և շատ գինի խմել. զի ստէ Դեմոկրիտոս՝ առա-
տանան գինիք և ձիթուկք: Տարին է աջողակ
անկելոյ զորթ և զայգիս, ոչ զծառա: Մեռանին
մեծամեծ անասունք և ընտնի կենդանիք: Հա-
տանայ տենդն: Ազաչեսցնւք զԱ՛ճ, զի մի հան-
դիպեսցի երկրաշարժուի: Յայսմ խոռոչուն Տի
տեսանի զօհալն յերկոտասաներոյդմ տան երկ
նից քառանկիւնի հայեցուածով ի արեգական.
ևս՝ լուսինն կցել ի հրտաին յերորդում տան
երկնից, ուր են վատարախտք: Եւս՝ ցուցանի
ազդի մարդոյ մնաս, նեղուի և ձախորդուի, մինչ
զի ոչ ևս տեսանի սէր, ոչ բարեկամուի և ոչ
ճշմարտուի, սլլ հասարակ աւերուի: Յայսմ

ամի ՚ի 12 Հոկտեմբերի ՚ի 21 և կէս ժամու՝
 խաւարի արեգիկն, երբ ը լուսնոյն շքշի յուժե-
 րորդ տան երկնից, ՚ի ներքոյ կշիւ կենդանակեր-
 պի. վայ՝ գուշակի մահ մեծ և հզօր թագա-
 ւորի ուրուք, կամ իշխանի. լինի սով և հասա-
 րակ մահտարածամ: Ասի թագաւորք և իշ-
 խանք, որք ը իշխանուք Աշուն կի՛ խոյին ճնան,
 կրեացն զանձկութիս և առուել ներկային քղայլս:

1802: 1830: 1858: 1886: 1914: 1942

Ի 21 Մարտի ՚ի մտանել արեգիկան յառա-
 ջին աստիճան խոյին, իշխան տարւոյն լինի Փայ-
 լածուն ը կշիւ նշանաւ: Առաջիկայ տարին լի-
 նի ամուլ և ստերջ. աւերումն ստորոյ, հար-
 ուածք մարդոց, մահ պիծակայ և մեղուաց.
 և ժանտաբեր ցաւ: Սկիզբն ձմերան ցուրտ.
 մէջն բարեխաւն. վերջն գարնանային, յոյժ-
 վապաղ, սաւնամանուտ, անձրեայորդ, և
 թանձրուի գետորէից: Գարունն անձրեւոտ.
 ծառք վնասին յանձրեաց. վերջն ՚ի տեղիս տե-
 դիս կորկաահարի: Ամառն անձրեային և մա-
 ռախլապատ. պարտ է փութով վճարել ըլ-
 հունձն, զի մի աւերեցի: Աշունն քամահար և
 առողջարար. որթք գոյլով խաղողս առնեն.
 բարւոք և աջողակ է անկելն դրոյս և տեղափո-
 խել զորթս. ցարեանն դիւրաւ ապականի. աս-

րին անցանի առանց հիւանդուէ : Եղաչեցյուք
 զՄ. Ծ վս սրտոց. տարիս է առատանձրև. և լինի
 տարածայնուի ՚ի մէջ իշխանաց : Յայսմ ամի
 տեսանի աւերուի գաւառ ի կամ քաղաքի միոյ.
 այլև անաջողուի, նեղուի, և այլ բազմ վնաս
 մարդոց : Եւ զի Մառեկն գտանի յեօթներդ
 տան երկնից քառանկիւնի հայեցուածով ընդ
 վայլածուին, և Չօհալն յութերորդմ տան
 երկնից ևս քառանկիւնի հայեցուածով ընդ
 արեգական. վսյ գուշակի մահ բիւր մարդոց,
 առաւել ևս տեսանի նրբուի և խորամանկուի
 ոմանց, որք այլոց զխորխորատ վտրելով ինքննք
 անկցին ՚ի նոյնն : Հանդիպի գերուի և բանտար
 կուի մարդոց՝ առաւել ք զչափն. ՚ի մէջ սրտո-
 նաց, և ՚ի մէջ այլևայլ նահանգաց երևին տա-
 րածայնուիք, կռիւք և խռովուիք, մինչ զի ոչ
 ևս ճանաչի հաւատարիս և բարեկասի : Չօ-
 հալն ձախակի հայեցել ՚ի հրատն, ցուցանէ ըղ-
 նենդուիս, մասնուիս և զտուա խորհրդս, յորմէ
 ՚ի բզմ տեղիս հանդիպի աւերուի և խանդիս :



1803: 1834: 1859: 1887: 1915:

Յայսմ ամի՝ երբ արեգակն ՚ի 21 մարտի
 մտանէ յառաջին կէտն խոյն, իշխէ Մուշթա-
 րին ի կարիճ նշանաւ, որ է տուն Հրատին : Յա-
 ռաջիկայ տարիս է առատուի ցորենոց, գինւոց,

ձիթոյ, ապրշմի և ձկան: Իսկ վս զօրուք կարճին
 ձմեռն լինի բազմաձիւն և կոտորած անասնոց,
 որք յանդեացս արածին. մէջն ձմեռան բարե-
 խառն և քամոտ. վերջն գէջ, եղեմնոտ, խաւար
 չուտ և խառն ցաւագորուք: Ամառն լինի նման
 գարնան: Տարիս է կասկածոտ վս յղի կանանց.
 առատուի մրգոց: Առէ Դեմոկրիտոս՝ թէ յայ-
 սրմ ամի շտատնան գետք, կարկուտք նօսրանան:
 Աշունն ջրայլն. ձիթուեր լինին բաւելն, պսակ
 ման և վաւշն. գուշակի սրտերազմ, որոտ-
 մուեր ևս յամառան եղանակին: Հրասն գտա-
 նի՝ ՚ի տաննէրդ տան երկնից. ուտտի բզի՝ կոտ-
 րածք, ստատիկ սրտերազմ և հիւանդուի, սա-
 կաւ հաւատարմութի՝ ՚ի մէջ մարդոց: Առուաբե-
 րնն ՚ի մէջ երկնից, և ՚ի շաւաւիղոց յարեզա-
 կան, ցուցանէ զմահ թաղաւորի. զնոյնն ցուցա-
 նէ և Հրասն ի նշանին ՚ի մէջ երկնից: Մուշ-
 թարին յութեյրդ տան երկնից՝ թուի թէ ցու-
 ցանէ զյանկարճէն մահ. և զի նոյն մուշթարին
 է կցել ի վայլուծուին՝ ուտտի ցուցանէ զխովովսա
 կան բարս վաճառակնաց: Մահուամբ հարին
 երեսայք, լամ նշանակէ Փայլածուն յութե-
 րորդ տան երկնից. լինին զանազան հիւան-
 դուեր, հարուածք անասնոց, մնասք ծառոց և
 ստղոց: Ժողովուրդք զաւժանս կրեացնն ՚ի
 տեարց. հոգն ոչ բարւոք ստղաբերէ, և ամ
 խաղանուի երեւի միջակօրն, լնորում ցուցանէ
 լուսինն կցեալ ի երեւակին, երեւակն ՚ի վեցե-

բորդ տան երկնից, ևս լուսաբերն յիննեբորդ
տան երկնից, և առիւծ կենդանակերպն ՚ի ժա-
մագէտ տեղւոջ :

1804: 1832: 1860: 1888: 1916:

Երբ արեգակն ՚ի 21 մարտի մտանէ յառա-
ջին ատտիճան խոյին, լուսաբերն լինի իշխան
տարւոյն ի կարճին, որ է տուն հրատին: Յա-
ռաջիկայ տարիս լինի յոյժ պարարտ և առատ
ցորենով և այլ պտղովք: Սկիզբն ձմերան լինի
ցուրտ ի կարկախ. մէջն ջերմ, և վերջն բա-
րեխան. Գարունն մինչ յյունիս ամիսն ցուրտ,
ցուցանէ ևս զանձրևս և զորոտմունս. բայց յե-
տպ պակասին ջուրք յաղբերաց, վսյ մեռանին
բզմ կղերք: Ասէ Դեմոկրիտոս՝ թէ յաշնան
ածին գետք և լիցին հիւանդութիք. աղաչեսցանք
զԱ՛ծ, զի չիցէ մահաարածամ: Պարտ է լինել
տակաւակեր, և շատ ըմբել զղինի. ՚ի սկիզբն
ձմերան անձրևէ, և ձիւնէ աւելի քան զչափն:
Յայտմ ամի՛ շատանայ տենդն, և այլ հիւան-
դութի՛ պատճառել ՚ի ջերմութի, լմ նշանա-
կէ լուսնթագն ՚ի վեցեբորդ տան երկնից: Գար
ձեալ՝ տեսանի մեծ հարուած՝ մանաւանդ ճե-
րոց և երեսայից. կանանց աւերումն, ուր դուշա
կեն հրտան կցեալ ի երեակին, և քառանկիւ-
նի հայեցուածով ի շմսին, վայլածուն բոր.

բորեալ ՚ի շառաւիղաց արեղական, և քառա-
կուսի հայեցուածով ի մառեխին, այլ և ՚ի վեցե-
րորդմ տան երկնից. լուսաբերն կցիլ ի տուտ
վիշապին, և լուսինն եղեալ յուժերորդ տան
երկնից: Յարիցեն վիճմունք և կուրք, այլևայլ
տրանց լըդէմ թագընն իւրենց: Աւս անկանի
տարածայնուի ՚ի մէջ եղբարց և սիրելից, ուց
յուցանէ հրատն կցեալ ի երևակին, և քառա-
կուսի հայեցուածով ի արեղական յերրորդում
տան երկնից: Տիրեն նենդուիք և խաբէուիք ՚ի
մէջ գրողրաց և վաճառականաց, որ աղաղաւ
հանդիպի նց մեծ դժուարուի և նեղուի, լւմ
յուցանէ վայլածուն բորբորել ՚ի շառաւիղաց
արեղական, և քառանկիւնի հայեցուածով ի
հրատին: Արքունի սպասաւորաց լինի մեծ վնաս
և նեղուի, զի տէ՛րն տասնբորդ տան է վայլա-
ծուն, որ քառանկիւնի հայեցուածով և մա-
սամբ հայի ՚ի հրատն:



1805: 1833: 1864: 1889: 1947:

Յորժամ ՚ի 21 մարտի արեղակն յառա-
ջին կէտն խային մտանէ, իշխան տարւոյն լի-
նի նոյն արեղակն ի աղեղնաւորին, որ է տուն
լուսնթաղին: Յառաջիկայ տարւոջ լինի սա-
րարտուի ցորենոց և այլ թեթեալին իրաց:
Սկիզբն ձմեւան բարեխաան լինի և ջրային.

մէջն յորդուի գետորէից. վերջն ցուրտ, և քա-
 մի: Գարունն հարաւային և անձրեւային: Աման
 բարեխառն՝ հով և զով. կանուխ հաւաքել
 պարտիս զսլտուղս, զի մի տւերեսոյին յանձրեւոյ:
 Յաշնան հաւաստի հնչեն տարեկան հողմք
 պտուղք լինին բարեհամք և դիւրահասք. ճաւ
 քաղուին է մնացական, և այլ ճաւք պարար-
 տաբերք լինին: Տնկել զտունկս լաւ է. մեռա-
 նին մեծամեծ անասունք և շատ շունք: Ծովն
 տէ՛ծ փի. տկարուի երեսայից. յետի քայլէ շք-
 ջան տարւոյս: Յայսմ ամի տեսանի բաղում՝ ա-
 ըխնհեղուի, և զանաղան մնասահարուի. զի զօ-
 հալն զտանի չ տուտ վիշապին, և նոյն երևակն
 երևի յառաջնում տան երկնից, վնյ լինին պտ-
 տերաղմունք, սպանուիք, և վտանգ թագաւորից.
 վիճմունք, խռովուիք, տարածայնուիք, և մնայք
 ՚ի վաճառականուի: Չ նոյնն զուշակէ հրտոն
 չ լուսնթաղին կցեալ՝ և քառանկիւնի հայե-
 ցուածով չ երևակին եղեալ յանկեան երկրի:
 Մարդիկ պտորաստեցեն զճանապարհս առ-
 նել ՚ի հեռի Յ, և շուեցեն ՚ի հայրենեցն յան-
 վտանգս վաճառականուի, լամ փայլածուն յեր-
 բորդում տան, և լուսինն յիններորդ տան երկ
 նից նշանեն. զի փայլածուն և լուսին իշխեն ՚ի
 վերայ ճանապարհորդաց, նաւորդաց, և վա-
 ճառական տրանց:



1806: 1834: 1862: 1890: 1918:

Իմասնեւ արեգական յառաջին տրոիճան
 խոյին ՚ի 24 մարտի՝ իշխան տարւոյն լինի լուսի-
 նըն չէ աղեղնաւորիս, որ է տուն լուսնթագին:
 Յառաջիկայ ամի է պարտա միջակօրէն. զի անձ-
 րեւէ քան զչափն աւելիւ Չմեռն լինի բարեխա-
 ռըն. մէջն գէջ, աղմոտ և քամոտ. վերջն յոր-
 դուի ջրոց. կարկուտք և ձիւնք. զինի ելանելոյ
 շնիկ աստեղն, երևի ջերմուի և ցաւահարուի:
 Տարեկան քամիք հնչեացեն: Գուշակի երկրա-
 շարժուի. դաշտայինք առաւել պարտաբերք
 իցեն՝ ք զմայրիտ, ցորենուլ, ձիթուլ, դինեաւ, և
 այլ պողովք: Տարիս է աջողակ վսփաքք անաս-
 նոց, բայց ձախորդ երևի վս մեծամեծ անասնոց:
 Յաշան ժամանակի երևին գլխացաւուիք և
 աչացաւուիք: Աղաչեա՛ զԱ՛Տ, զի սառնամանիք
 ոչ մնասեացեն պողոց. և մի յամառան իցեն հի-
 ւանդուիք: Լուսնթագն յառաջին տան երկ-
 նից նշանակէ զառողջուի մարդկային անդամի:
 Երևակն ՚ի տասներորդ տան, և տուտ վիշտային
 կցեալ չէ հրատին, և հրատս ՚ի շարժուն կենդա-
 նակերպն, են նշան արիւնահեղ պատերազմաց
 և կոտորածոց: Թագաւորք և իշխանք զանտա-
 նելի հարկս դիցեն ՚ի վր ժողովրդեն, և զանհա-
 ճոյ և զանիրաւ արարս ցուցցեն: Երևին աւա-
 զակք և դողք սյնքոն, մինչ զի ճանապարհորդք

օչ իցեն անկասկածք . որպէս հրատն յին .
 ներորդ տան երկնից ի տուտ վիշապին ցուցնէ :
Եւ զի տասցել հրատն գտանի ՚ի տանն երեւ-
 կին, և երեւակն օչ հայի ՚ի հրատն . ուստի կար-
 ծի թէ՛ բանտք բռնուի բացցին, և բազումք
 ելցեն ՚ի բանտից : Փայլածուն յերկոտտանե-
 րորդ տան երկնից նշանակէ զանկումն լաճառա
 կանաց և իմաստնոց յաւաջին փառայն և ՚ի
 պատւոյն :

1807: 1835: 1863: 1891: 1919:

Յորժամ արեգակն ՚ի 24 մարտի մասնէ յա-
 աւջին կէտ խոյին՝ իշխան տարւոյն է մառեկն
 ի սցծեղջեր, որ է տուն երեւակին : Տարիս յա-
 աւջիկայ լինի ցամաք . անհուն պատերազմունք :
Չմեռն անձրեւային, և առատուի մարտից . աճի
 բոլոր հիւսիսային և քամոտ ՚ի տեղիս տեղիս :
Չկնի դարնանամաին երևի մահատարածամ .
 մշտակայ անձրեք . յորդուի և թանձրուի գե-
 տոց : **Մ**մառն բարեխառն և առողջարար : **Մ**շու-
 նըն քամոտ և ջերմ . ցաւահարուիք, գլխացա-
 ւուիք և իջուածք . հայք՝ մանաւանդ ՚ի լեռնա-
 յին տեղիս : **Մ**ղայեացուք զ**Մ**ծ, զի չիցէ պատե-
 րազմ : **Մ**սէ Դեմոկրիտոս, թէ գիւնիք լինին
 բարեհամք, և բոլոր տարին աջողակ . կանխեալ
 հաւաքել զպտուղս սակս անձրեւաց . երեւակն է
 յանկեան եօթնեթո տան երկնից . ուստի թուի


Թէ լինին կռիւք և կոտորածք. նոյն երևակն
կցեալ չէ լուսաբերին ցուցանէ զմահ անուանի
և հարուստ տիկնոջ: Լուսինն կցեալ չէ զլուս
վիշապին գուշակէ մահ արանց դոլուէ արժա-
նեաց. աւերուի, և մնաս պտղոյ. շէմնն է յին-
նեբորդ տան երկնից, ուստի Թագաւոր մի արաս
ցէ զճանապարհ. լինին՝ ուղ կարծի, ահագին երկ
բաշարժք, զի հրատն է չէ լուսնոյն:



1808: 1836: 1864: 1892: 1920:

Յարժամ 'ի 21 մարտի արեգակն յառաջին
կէտն խոյն մտանէ. իշխան տարւոյն լինի փայ-
լածուն չէ այժեղքեր, որ է տուն զօհալին: Յա-
ջիկաց աճի է երաշտ և ցամաք. խոսվուի մար-
դոց, կոտորածք մեծամեծ անասնոց, աջողակ մա-
նրո չորբոտանի կենդանեաց. սակաւ ձէթ, շատ
զինի և միրգ: Սղլն ձմերն ցուրտ, մէջն անոյշ,
վերջն հողմակոծ: Գարունն ջրառատ, ցուրտ և
եղեճասար: Լմաուն անձրևոտ վասն սաստիկ
հողմահոսուեն. բաժին ինչ ցորենոց և արտորէ
իցն մնասի. ուղիք և հեղեղք ջրոց: Յաշնան
հնչեն ջրածին քամիք: Հայցեսցուք յսի զի մի
լիցի սաստիկ տենդ տղայոց և արանց: Եղեամն,
որ է սառուցել ցող 'ի բզմ տեղիս մնասէ խա-
ղողոյ. յարտորայս գայցեն գազանք անտառի և
Թռչունք: Եղթեսցուք առ Ե՛ճ, զի մի երևի-


յի մահտարածամբ, երկրաշարժուի և կայծակ-
 նահարուի: Յայսմ ամի արեգակն է ՚ի վեցե-
 րորդ տան երկնից. ուստի սաստիկ հիւանդուի,
 ցաւազարուի, մանաւանդ յաչս. հարուածք և
 կոտորածք անասնոց. սրահասուի ձիթոյ, զի կշի-
 ւքն է ժամադէտ: Փայլածուն արեւելեան, և
 կցեալ ի երեւակին՝ ցուցանէ մեծի վնասուց և
 տուժանաց հանդիպիլ թագաւորին, և արքու-
 նի գրագրոց. սաւատանան և ցնձան երաժիշտք
 ի կուսանաց: Լուսաբերն յեօթներորդ տան
 երկնից նշանակէ զաջողուի կանանց, և իգաբա-
 րոյ արանց. բայց լրակի ցուցանէ զհարուածս
 աամկաց, զոր և զօհալն հինգերորդ տան երկնից
 նշանակէ: Եղիցի մեծ կռիւ, սպանուի և հեղու-
 մըն արեան. բազումք ՚ի բանտարդելոցն փախի-
 ցնն, իբրմ՝ ցուցանեն հրատն յանկեն երկնի, ՚ի
 զօհալին, և զօհալն աւանց հայեցծոյն ՚ի հրատն:



1809: 1837: 1865: 1893: 1921:

Երբ արեգակն ՚ի 24 մարտի. մտանէ յառա-
 ջին աստիճան խոյին. իշխան տարւոյն լինի լու-
 սաբեր մոլորակն ի այժեղջեր կենդանակերպին,
 որ է օթեան երեւակին: Յայս առաջիկայ աֆն
 լիցի յոյժ առատուի ցորենոյ, գինւոյ, մետաքսի,
 (սպրշմի) և այլ մրգաց: Սկիզբն ձմերան լիցի
 ցուրտ և կարկտախտուն. մէջն ջերմ. իսկ վերջն

բարեխառն: Գարունն՝ ցուրտ մինչև ցՁԱ յու-
նխի: Ամառն երբեքն անձրևեացէ և երբեքն
որտայցէ: Ասէ Գեմոկրիստոս. թէ յաշնան ժա-
մանակի լիցի առատուի աղբերաց, և շարժեացին
հիւանդուիք: Պարտիմք զդուշանալ յորկրա-
մոլուէ, և առաւել ևս յարբեցուէ: Յայսմ
աթի՛ զի լուսնի թագն յետարայլ, և «ըջ» գա-
նի, և վտտաբախտ յերևակէն. է նշան՝ թէ թա-
գաւորն պատժիցէ զիւր հպատակս, և ևս՝ թե
լինելոց են մեծամեծ պատերազմունք. զի լուսնն
թագն գտանի յուր թերորդ տան երկնից: Գար-
ձեալ՝ հրտան քաւնիկունի հայեցողուն լեւրեա-
կին և լուսնի թագին, նշանիկէ յուր պատերազ-
մունս, և զինուորական կործանմունս: Աւս և
քանզի ասացիլ հրտան լեւրեալ լուսնի թագին ախրեն
տասներորդ տան երկնից, է նշան՝ թէ թագաւո-
րը՛ վա պատերազմի՛ ելցէ յիւր երկրէն և արա-
ցէ ճանապարհս: Գարձիլ՝ զի հրտան է հայե-
ցեալ ՚ի լուսնոյն քաւնիկունի հայեցողուն, ցու-
ցուցանէ լինել զանուան հիւանդուիս մարդոց,
հանդիպիլ ջերմուն և չորուն. ևս՝ սով և մահ
տարածամ, սատակումն կենդանեաց: Ասմկա-
կան ժողովուրդք մնասին յիշխանաց, լըրի՛ ցու-
ցանէ լուսինն կցեալ լեւրեակին: Աւս՝ զի արե-
գակն գտանի յերրորդ տան երկնից, նշանակէ՛
թէ թագաւորն աւեալ լեւրեան զարս քաջս,
առնելոց է ճանապարհս:




1810: 1838: 1866: 1894: 1922:

Երբ արեգակն ՚ի 21 մարտի. մտանէ յառաջին աստիճան խոյն, իշխան տարւոյն լինի երեակն չ ջրհոսին : Յառաջիկայ ամի լիցի առատաւ ընչից, ուրախաւ ՚ի մէջ մարդկան. մահանասնոց և թռչնոց. ՚ի բոլոր տարին հնչեացեն հարւային հողմունք : Սկիզբն ձմերան լիցի քամա. մէջն բարեխառն. վերջն սառնամանիք և հողմունք : Գարունն լիցի բարեխառն և սակաւանձրեառ : Լմառն լիցի նոյնպէս բարեխառն, և հնչեացեն հողմունք բարեհամբոյրք. սրտուղբ լիցի առատ, բայց միբոք ստրականեալք : Յաշնան երեւոցին տկարուիք, մանուանդ ՚ի մէջ երիտասրդաց, իսկ ՚ի մէջ կանանց՝ ջրհոսուիք աչաց, յորմէ մեռանիցին ոչ սակէք : Լիցին ևս՝ լը կարծեաց դեմնկրխոտի, Ֆնասաբեր կարկուտք : Տի Լճ փրկեացէ զմեզ ՚ի տարածամ մահուանէ :

Յայսմ ամի թուի թէ՛ ասմիկք կրեացեն յիշխանաց իւրենց բազմ՝ ծանրուիս և բռնուիս Եւս և՛ ծանր տկարուիս սակա արեան՝ սպաւանուե : Մահ արանց այնոցիկ որք լը երեւակաւըն ծնան, և որք անցել են զամօք. լըբի՛ ցուցանէ երեակն կցեալ լը արեգական և մերձ ՚ի գլուխ վիշապին. ոյր աղագաւ նշանակէ զոչխարաց, և զայլ անասնոց մահս : Գարձեալ՝ լուսն թաղին դտանի լը տուտ վիշապին և լը Ֆնասակար

դիրս զևտեղնէ՛ և այս ցուցանէ՛ զմահ մարդոց,
 զտկարուի, զանհաւատարմուի, զաղքատուի, ըլ
 տենդ և զճերմեռանդն ախտ: Եւս՝ և զի արեգա-
 կըն գտանի յերկոտասաննրդ տան երկնից, նշա-
 նակէ՛ թէ թագաւորք ունիցին զնեղուիս, և ըն
 տանիքն զանպան խորհուրդս դիմակացուի ընդ
 թագաւորաց: Ի վախճանի՛ զի վայլածուն գտա
 նի Ի մետասաննրդ տան երկնից, նշանակէ՛ թէ
 թագաւորն հրաւիրէ և պատուէ զարմ իմաստնս:




1814: 1839: 1867: 1895: 1923: 1951

Յորժամ արեգակն ՚ի 24 մարտի. մտանէ յա
 աջին առախճան խոյին. իշխան տորւոյն լինի
 արեգակն ը ջրհոս կենդանակերպին: Տարին լի-
 նի առատ ցորենով, զինեաւ, և այլ թեթեալին
 ընչիւք. յորդ անձրև. մահ թռչնոց յարևելին
 ձմեռնային կողմունս. զի յայնոսիկ կողմունս լի-
 ցին ցուրտ մառախլապատ, և հեղեղք ջուրց:
 Ձկնի դարնանամտին ՚ի խիստ և լեռնային տե-
 ղիս երևեացին կարկուտք. բայց պողպեքերուին
 լիցի առատ: Բոլոր տարին լիցի առողջարար՝
 բայ յաշնանային եղանակէն: Պարտ է կանխու-
 քաղել զպտուղս զի մի մնասիցին յանձրևաց:

Յայսմ ամի պտուղք և միրգք լիցին բարե-
 համք, հոլովածուծք, փութահասք և մնայալիք
 զկնի պողպաղուեն. ծառք պարարտք և պողա-

լիցք. բարեւոք է անկեւլն. մահ մեծամեծ կենդա-
նեաց. ոչ սակաւ ալէկոծուի ծովու. ուժղին և
սաստիկ հողմունք: Ծանրագնաց թուի յառա-
ջիկայ տարիս՝ ք զհասարակն և զսոլորականն:

Յայսմ ամի երևեսցին բզմ՝ աւազակք, և բա-
րեզաշտուի բարձցի՝ ի մարդկանէ, լըմ՝ երևա-
կըն ցուցանէ լեալ յիննեքդ տան երկնից: Աւ-
ղի է հայեցել քառանկիւնի հայեցողութի ի հրա-
տէն՝ զինուորք վիճեսցեն լըմմանս, և վտիտ-
խեսցին ի տեղւոջէ՝ ի տեղիս: Աւղի վերցիշէլ
հրատն դտանի յերկոտասանեքդ տան երկնից,
նշանակէ զըսզմնց դանակաւ և սրով սպանուի:
Աւս և՛ զի արեգակն դտանի յիննեքդ տան երկ-
նից, և կցել լը գլուխ վիշապին, ցուցանէ՝ թէ
թագաւոր մի առնէ ճանապարհ. ցուցանէ ևս՝
զմահ հղօր արանց և զայլ մարդոց: Չքասցին
թագաւորքն, որք բռնութի կամիցին թագաւո-
րել, և զայլ իշխանուի լըտէրութի ամել: Դար-
ձեալ՝ լուսաբերն և վայլածուն բախտազուրկք
և այրեցելք, նշան է՝ վնաս ինչ հանդիպելոց
ուամկայ ի թագաւորէն, և թագաւորին ի բամ-
կաց: Ի վախճանի՝ իշխօղն տասնեքդ տան է
անբախտ, և մինչ այրեցել ևս դտանի յանկել
տան, ցուցանէ զանձկուիս, վշտակրուիս, և վնա-
սըս արքունական պաշտօնէից:



1842: 1840: 1868: 1896: 1924:

Երբ արեգիկն 'ի 21 մարտի մասնէ՛ յառաջին
առտիճան խոյին, իշխօզ տարւոյն լինի լուսինն:
Եւ զի լուսինն գտանի 'ի մէջ երկնից, 'ի ասն
լուսնթաղին, որ է ձուկն, յառաջիկայ ամի լինի
առատուի ցորենոց և զինւոց, յաճախ կարկուտ՝
'ի լեռնային կողմունս. սրտուղք առատանան.
զետք յորգանան. տարին բոլոր լինի առողջա-
բար՝ բաց յաշնան եղանակէն, յորում գուշա-
կի մահ կանանց: Ասէ Գեմնկրխոտ՝ ճնանին
շուրջ զբերանոփն ծորակք. ուստի սարտին մա-
'նաւանդ երխտասարդք՝ ըմպել զգինի, և ոչ ըզ
ջուր միայն՝ 'ի գարնան եղանակին. ձիթենիք ոչ
առատ երևին: Յայսմ ամի՝ զի լուսնթաղն զը-
տանի յերբօրդ ասն երկնից, նշանակէ զբարե-
խախտուի և զաջողուի մարդկան: Եւ զի կշիւն
գտանի ընբախտի կխտումի, նշան է ձիթոյ նը-
ուաղուն: Եւս՝ զի հրտան կցեալ երևի չ զլուխ
վիշապին, երևի թէ մարդիկ առցեն զգէնս, և չ
միմեանս մարանչիցին: 'ի վախճանի՝ զի երևակն
գտանի յանկեան անդ, նշան է սաստիկ սլատե-
րազմի և ուժգին կոտորածի:

1843: 1844: 1869: 1897: 1925:


Յորժամ 'ի 21 մարտի, մտցէ արեգակն

յառաջին տատիճան խոյին իշխօղ տարւոյն
 լիցի փայլածուն, վասն զի գտանի ՚ի մէջ երկ-
 նից ՚ի տան լուսն[ժագին, (որ է ձուկն), յիւրում
 բարձրուն, և յիւրում յառաջնում հայեցո-
 ղուն: Այ տակի է. յայտ ամի գուշակի կա-
 տարեալ հաւաքումն ցորենոց և մահ մեզուաց.
 ախտ ժանտաբեր և ստղոց սպակինուի: Սկիզբն
 ձմերան լիցի անձրեացին՝ ցուրտ և որտախառն.
 մէջն բարեխառն. խոկ ՚ի վերջն սաստիկուի սառնա
 մանեաց, անձրեաց և գետոց: Գարունն անձ-
 րեացին և վնասակար ծառոց մինչև ցաւրան. ՚ի
 տեղիս տեղիս լինին կարկուտք: Լմառն անձ-
 րեացին և մառախլապատ. սարտիւք կանխաւ
 քաղել զհունձսն, զի մի սպականիցին: Լշունն՝
 լիցի հողմաշատ և առողջարար. որ[ժք բազմա-
 խաղողք. անկելն զճառս, և զարմատս շահաւէտ
 է, ցորեանն զիւրաւ սպականի: Պարտ է ազա-
 չել զԼճ վս ստղոց. ևս՝ զի չիցէ խառնուի ՚ի
 մէջ իշխանաց: Յայտ ամի տեսցի տատիկ մահ
 մեծանուն և հարուստ կանանց. զի երեակն և
 լուսաբերն գտանին կցելք: Գարձել՝ լուսըն-
 ժագն յառաջնում տան երկնից՝ նշանակէ զա-
 զատուի մարդոց յսմ հիւանդուէ. սրտահե-
 ցին սաստիկ սրտերազմունք՝ և սպանմունք.
 մանաւանդ ՚ի ժագաւորս, և ՚ի յօգնիչս իւ-
 րեանց. ըտողում ցուցանեն երեակն յանկն
 և հրասն յուժերորդ տան երկնից:

1814: 1842: 1870: 1898: 1926:

Ի մտանել արեգական յառաջին ստաիճան
 խոյնն 'ի 24 մարտի. իշխող տարւոյն լինի լու-
 սընթազն: Քանզի սա գտանի 'ի միջի երկնից՝
 'ի տան հրատին, որ է խոյն, ուր գոյ իւր բարձ-
 րուին յիւր առաջին հայեցողութեան: Այ
 կարելի է ասել, թէ յառաջիկայ տարիս լինի
 պողաբեր, և առատ ցորենով, գինեաւ, մեղրով,
 ձիթով, վշով, ապրշմաւ, ձկամբ, և ամ բարե-
 համ պտղովք: Ամբ բոլոր լինի բարի և խա-
 ղաղ՝ բաց 'ի պատերազմէ: Սկիզբն ձմե-
 րան ցուրտ, հանդերձ կարկտովք. մէջն ջերմ.
 վերջն հանդարտ: Գարունն ցուրտ՝ մինչ 'ի 22
 յունիսի. նշան է անձրեաց՝ և որոտմանց. պա-
 կասին ջուրք յաղբերաց. մեռցին եզինք ոչ սա-
 կաւք: Չկնի աշնան աճին գետորայք. լինին
 հիւանդուիք: Աղաչեսցուք զԱՅ, զի շիցէ
 մահտարածամ: Պարտիմք լինել սակաւակերք
 և զդուշանալ 'ի ջրոց: Արդ՝ զի յայամ ամի ա-
 րեգակն գտանի յերկոտասաներդ տան երկնից՝
 ի հրատին, ցուցանէ թէ թագաւորն այլազգեց
 յոյժ նեղիցի յիւրոց թշնամեաց, գուցէ ևս 'ի
 նոցանէ սպանցի ի սատկամբ բզմ՝ զինուորաց
 Եւս՝ զի երեւակն է յելն, և 'ի քառակուսի հա-
 յեցողուի ի լուսնթագին, ցուցանին արիւնա-
 հեղ պատերազմունք. վսյ՝ 'ի կողմանէ թագա-

ւորին հասանելիին մարդոց սաստիկ ներդուլք և
տրամուլք: Եւս՝ նշանակին վտանգ թագաւո-
րաց, վէճք, տարածայնուլք, և վնասք ի՛ վաճա-
ռականուլթեան:



1845: 1843: 1874: 1899: 1927:

Յայսմ ամի՝ երբ արեգակն յառաջին սաստի-
ճան խոյին՝ ՚ի 21 մարտի մտանէ. իշխօղ տար-
ւոյն լինի վայրժուէն, որ դտանի ՚ի մէջ երկնից.
յի՛ ՚ի մէջ խոյին, որ է տուն հրտին, ևս յառաջ-
նում հայեցողուէ: Ուստի ՚ի յառաջիկայ ա՞ն լիցի
լիուլի ամ իրաց. ցորենոց, խաղողոց, ձիթապտղոց,
կտաւահատի, ապրշմի, մնոց և ձկան: Սկիզբն
ձմերան լինի ցուրտ և կարկուտ. մէջն ջերմ.
վերջն քաղցր: Գարունն ցուրտ մինչև ցսկիզբն
ամառան: Ամառն յոյժ ջերմ: Աշնան լիցի
սառնամանիք, սնձրե և հեւանդուլթիւն. ման-
կամարդաց հանդիպին ցաւք աչաց: Գաշտային
տեղիք լինին առաւելապտուղք, քան թէ լեւնա-
յինք: Գինիք վնասին և նուաղին. սո՞րտ է յե-
տի քաղել զխաղողն: Պտուղք ծառոց առատու-
ցին. բարւոք է նաւարկուք ուղեորիլ. առէ՛ Գե
մսկրխոտ՝ թէ յաճախին կարկոք և հողմունք
ուժգնակի հնչեացեն: Պո՞րտ է աղաչել զԱ՛ծ
Աս միզարգելուն հոսման գաղղիական հիւ-
թոց ՚ի սաղմանց խողովակէ (որ ասի սուզանակ)
ևս լուծման արգանդի կանանց, որոց պատա-
հի փոխանակ տեւատեսական արնն հոսիլ հիւթ-
սպիտակ շարաֆոյ նման՝ ընկնլ պալսամում
քոխայիվայ քսան կաթիլ • զոր պարտ է խառ-
նել լը մի ձուոյ դեղնուցի, լը մի տրամ խիժի ա-
րաբիոյ, լը լտ'' ասի կուժի արապիքում • լը մի
տրամ ծեծեալ քաղցր նշոյ, յաւելլով լը նմա
փոքր ինչ շաքար՝ և կէս ֆունդ գոլ ջուր զոր

բոլորն խառնել 'ի միասին քամեա՛ քաթ'նով և
 լն'ց 'ի մէջ շուշայի, յետոյ 'ի միջոցս 12 ժամուց
 պարտ է ըմպել, բաժանելով ը չափու ժա-
 մու. և զինքն պարտ է պահպանել յըմպելնց և
 'ի կերակրոց վնասակարաց :

Փոշի լուծողական օգտուէտ է 'ի դիպուա-
 ծըս յարբուխոյ և իջուածոց . մանաւանդ՝ առ
 թեւոց 'ի թանձր հիւթոց . մաքրէ մեղմապէս
 քերելով և 'ի դուրս վանելով զաղտեղուի ստա-
 մոքսի, և ստորին որովայնի : Բաղադրի
 'ի կէս դրամ եալափայ արմատոյ լօսելոյ, և
 յերկու դրամ քրէմօրէ տի թարթարոյ փոշիա-
 ցելոյ . զոր ըմպեն խառնել փոքր ինչ գոլ ջրով,
 'ի պահ առաւօտուն 'ի ծովուստ :



Պատճառովն ինչ որ զանազանսն և զսանազանսն ինչ
 շարժուց, 'ն զինքն ինչն ընկերացոյցսն Բժշկարա-
 նին, որ յեփէմեղաւնն ։


Լիպրա լւ լւ" . լւ տճ" իւղ տրամ և լւ
 մեղ լիտր . է չափ նշանակիչ հարիւր տրամոյ
 քանակուէ, որ և իցէ իրաց . յորում սարու-
 նակի երկոտասան ունկի և կէս ։

Կուժժա լւ լւ" . լւ մեղ կաթիլ կի՛ շիթ
 լւ ուսաց կապլեա . որով իմանամք զկաթ-
 ուած մի դուղնամաննի՛ն և իցէ հեղանիւթոյ ,
 որոյ վաթսուն կաթուածն կշռէ լւ բժշկաց
 զմի ամբողջ տրամ . ուրեքն 60 կապլեան կի՛
 60 շիթն և կի՛ 60 կաթիլն մի տրամ է , և
 այս մի շիթն կամ կաթիլն է զուգակշիռ միոյ
 ցորենոյ ։

Ունչիտ լւ լւ" . ըստ մեղ մի ունկի . ըստ
 ուսաց ունցիլ . է կշիռ դեղօրէից որ առնէ
 ութն տրամ , կամ երկոտասաներրորդ մասն
 լտեր և չորս տրամ . ուստի 50 ունկիքն առնեն
 400 տրամ ամբողջ ։

Գրանում ունում, ըստ լւ" : Է ցորենա
 քաշ կշռոյ քանակն, որոյ 60 գրանն եւրոպա-
 յի դեղածախքն՝ համարեն 1 մսխալ, որ է դրախ
 մայ . և ութն դրախմայն է 1 ունցիլ , և 12
 ունցիլն է 1 լիբրայ , որ է ֆունդ ։





Յօգուտ համբախց ասպարէճս աստանօր զտեարակն
Դաւիթ Բժշկին՝ որ յաշագս հաշիւամարդն ։

Յաղագս ցաւոյն կամ հիւադուեն՝ զորմէ
են բանք աստանօր, կարևոր վարկու-
ցեալ նախադիել զոսկաւ ինչ զխտելիս,
ասեմ նախ առաջին զանուանէ նր. որ ասի
հայրամարտ ։ Սա է բառ յունական տառա-
դարձեալ ՚ի լատին բարբառ, և թարգմանի
մաղձաթախութի կամ մաղձահեղութիւն. որ
է անուն վաղնջական յատկացել ցաւոյ ինչ,
որով մարդ անդադար փըսխէ և լուծանէ
զլոկ մաղձ. և վննմանակցութեան ընդ այսմ
ցաւոյ ըստ ինչ ինչ մասանց և յատկու-
թեանցն, նոյն անուն եղաւ և սմա ։

Արդ՝ այս ցաւ երևեցաւ զառաջինն ՚ի սլան-
կալայ հնդկաստանի ՚ի գիւղաքաղաք Ճեշօր ՚ի
1816 ամի ան. ապա և յայլ բազում տեղիս
և ՚ի քաղաքըս հնդկաց աշխարհին. ուղ ՚ի
բումբայի, ՚ի մատրաս, և յայլս մինչև ՚ի
բթավիայ և ՚ի սմարան, և յայլ քաղաքս
մալայի. նաև ՚ի սասրայ, ՚ի սաղտատ, ՚ի
բուշեռ, ՚ի շիրաղ, ՚ի թեհրան, և յայլ քա-
ղաքս պարսկաստանի. և այս՝ ոչ լն որում
փոխադրական, այլ յապականեալ օդոյ ինչ
պատճառեալ. զորոյ ցարդ քննեալ ներ-

հուն բժշկաց և բժշկապետաց անդլիացւոց
 ոչ գտին զխսկութիւն պատճառին : Միայն
 այսչափ ինչ ծանուցաւ իբրև ստոյգ . թէ ՚ի
 յօդն գոյանայ սպականութի ինչ հակակիր
 մարդկային բնուի . ոչ ամ մարդոյ , այլ ու-
 մանց . կամ մանաւանդ բազմաց . և չի իսկ
 յայտնի թէ որ տեսակ մարդոյ , և ո՞ր բնուի
 է առաւել հակառակ . զի ամ հասակի և բնու-
 թեան և կազմուածոյ դրեթէ հաւասար պա-
 տասի . միայն թէ մանկանց և տղայոց ոչ տե-
 սու պատասխիլ այնպէս յաճախ . եթէ ոչ մի
 ում ՚ի հազարաց :

Եւ ո՞պ զանձն , նոյպէս և զժամանակն ոչ
 գիտէ խտրել այս ցաւ . զի ո՞պ յամառան և ՚ի
 տօթագին եղանակս , նոյնպէս և ՚ի ձմեռան և
 ՚ի ցրտագին ժամանակս անխտիր երևի . բայց
 լը մեծի մասին յամարայնի ՚ի ջերմագին եղա-
 նակս :

Դարձեալ յերևիլ ուրեք նշանի այսր ցա-
 ւոյ , պարտին բնակիչքն առհասարակ զգու-
 շանալ փութով . ծխել ՚ի բնակարանս իւ-
 բեանց զխուռնկ , կամ քացախ՝ արկել ՚ի վի-
 ջերմացուցեալ աղիւսի կամ աղուրի , և կամ
 յայլ ինչ այսպիսի . այլև ստէպ հոտոտել
 զխստոր , սոյ և զսոսկ քացախ . և լը ամի յստակ
 և մաքուր պահել զտեղիան . այլև ՚ի կարի
 ստիպել հարկին , պարտ է փոխել զբնակարա

ներն, Կամ զտեղին, և գնալ յայլուր հեռաւոր
Կամ ՚ի մերձակայ, ուր մաքուր իցէ օդն. զգու-
շանալ պարտ է և ՚ի շքրջելոյ յարևու Կամ
՚ի սօթաժամու աւուրն զի, փնասակար է յայն,
ժամ :

Ամեցեալ յայսմ վայրի ը կարի օգնել
ախտացելոյ ժանտախտիւս կալիւրամարսս,
առաջի առնեմք զկնի այսր զայլ ևս մետասան
տենդս սմին նմանս, որք՝ ՚ի ներդործուիս հայե-
ցեալ յարտաքինս, գողցես մի և նոյն են ը
այսմ, բայց յիրում բաղմօք զանազանին :
Պատշաճ համարեցաք յաւելուածս զայս նախ՝
վսայն զի հիւանդացելն միով ՚ի մետասան տենդի
ցլս մի՛ համարելով ախտանալ կալի-
ւրամարսսիւ՝ յուսահատեսցի թերևս առողջա-
նալ, այլ ծանիցէ թէ գոն ևս այլ նմին նման
ցաւք ոչ այնչափ երկնչելիք : Երկրորդ առի-
թըն որ յորդոր եղև մեզ յայս էր՝ առաջի առ-
նել որչափ մտրթ է պսցծառապէս զպատճառս,
յորոց բղխի վերոյանուանեալն
կալիւրամարսս :



Պատահաւեալն եւ իբրապ թիշիտաւեան ցաւոյն նորագ
 ծագելոյ 'ն հարկէն եւ երեւելոյ 'ն զանազան աշխարհ
 ոք անուանեալ էր շէ

Կալիբրամարայս :

ԱՅՍ ցաւ ունի երեք տեսակ սկիզբն, կամ
 երեք կերպիւ կարէ յառաջանալ . առա
 ջին կերպն է այն , զի յառաջ սկսանի յան
 կարծ ցաւիլ պորտն մարդոյ , կամ փորն շուրջ
 զպորտոյն . ապա յետքանի բոպէից, կամ սակաւ
 ժամանակի՝ սկսանի փսխել 'ի բերանոյն և լու
 ծանել յորովայնէ անդադար մինչև 'ի վերջն,
 կամ մինչև 'ի մեռանիլ հիւանդին :

Երկրորդ կերպն է այն , զի համարեա թէ
 բոլոր անդամն՝ և մանաւանդ ձեռքն , և 'ի
 նոսա առաւել մատուցն , ևս և ոտքն , և 'ի
 նոսա առաւել սրունքն կամ ոլոքն , սկսանին
 յանկարծ կարկամիլ կամ քաշվիլ մինչև յոյժ,
 հանդերձ վերոյգրեալ ցաւով պորտոյն , բայց
 սակաւ քան զայն . ապա յետ սակաւ բոպէից
 անցանելոյ սկսանի հիւանդն նոյնպէս փսխել
 և լուծանել անդադար :

Երրդ կերպն է՝ յորում մարդ յանկարծա
 կի ուշաթափի և փրփրի, և շատ թուլանայ . և
 յետ քանի մի բոպէից նոյնպէս փսխէ և լուծանէ :

Արդ յերևա կերպս յայտասիկ, յորժամ սկըսանի հիւանդն փսխել և լուծանել. յառաջին կ՛մ յերկրորդ անգամս փսխէ և լուծանէ միայն ըզ կերածն, և ապա հետ դհետէ թէ փսխեալն և թէ լուծեալն փոխին ՚ի պարզ ջուր. և միանգամայն ըսուէ քան զըսուէ և սասիճան քան զաստիճան առաւելու և սաստկանայ լուծումն և փըսխումն անդադար :

Յորժամ այս այսպէս լինի, հիւանդն սաստիկ ծարաւութիւն կրէ, և շատ ջերմութիւն կամ տաքութի ՚ի ներսն. որով յայրեցմանէ սրտին, անդադար աղաղակէ և ջուր խնդրէ. յերեսաց գոյնն՝ և շրթունքն, որ է պօռններն՝ առհասարակ կապտանան. ուն և ծայրք մատանցն ձեռաց. ոտքն և ձեռքն շատ առաւել սառնանան կ՛մ սրտին. ունչքն կամ քիթն սրանայ և բարականայ. և ՚ի բոլոր մարմնոյն և յանդամոյն հոսին ամենասառն կամ շատ սրաղ քրտունք. զարկ բազկին, որ է նամզն, նուազի յոյժ և թուլանայ այնքան, մինչև չլինիլ զգալի, նուազի կամ բարակի և ձայնն հիւանդին այնքան, մինչև դժուարաւ լսէ մարդ. և արագ շունչ առնլովն, կամ շուտ շուտ հեղալովն հազիւ թէ սրհէ զկենդանութիւն. այլև գանգատի հիւանդն շատ

վիճակի միջոցն , և ոչ բնաւ դտանէ հան-
դարտութիւն յանկողնի իւրում :

Եւ յայտոսիկ ամի սոսացաք , ոչ դա-
դարի լուծումն և փոխումն՝ սլլ հետ վհետէ
առաւելու և սաստկանայ . և վերջապէս լու-
ծեալն կամ փոխելն փոխարկին ՚ի դոյն արեան ,
և կամ ՚ի դոյն ջրոյ՝ յորում լուացեալ իցէ
միս . և եթէ դեղն ոչ արագեսցէ , կամ շուտ
չհասանի , յետ երեք կամ չորս ժամուց կամ
սհաթից արագի մահն , և ազատէ զոչորմե-
լի հիւանդն ՚ի ցաւոյն : Բայց գիտել պարտ է ,
զի այս ցաւ ոչ է փոխադրական կամ փոխ-
վող , ոսկ ժանտամահն է , և այլք այսպիսիք .
այլ պատճառի անմիջապէս յատկանութենէ
ինչ օդոյ , ոսկ սասցաւ ՚ի յառաջաբանու-
թեան :

Յետ մեռանելոյ հիւանդին . յորժամ բացցի
որովայն նր և մասունք ներքին անդամոցն զլն
նետցին , ուղեղն գլխոյն , և խախտոցոյն , կամ
ստամոքսն , և փորոտիքն ամ , և ս առաւել
թոքն և լեարդն գլտանին լի յորդագոյն ա-
րեամբ . և աղիքն առհասարակ փոխեալ ՚ի
բնաւոր դրից իւրեանց :

Արդ Գեղ և Գարեամն յայտին հիւանդութեան
է այս ինչ , զոր նշանակէն ՚ի ներսոյ . զոր և
պարտ է շուտակոյն ՚ի փոքր գինել որքան հարե-
լին է :

Եթէ ցաւն լինի ըստ առաջնոյն 'ի վերոյ նշանակեալ երկոյ կերպից՝ յորժամ հիւանդն նոր սկսանի վշտանալ կամ նեղանալ 'ի ցաւոյ սորոտոյն, պարտ է շուտով տալ ըմպել զնեղքոյ զրեալ դեղդ ։

Ընկալ

ուճ հոճ շուտ սրտի ունի ճիշտ
 ջուր միջոցն հոճ ամբողջ երեւոյն հոճի .
 ինչ ամանիոյ հոճ նմանի ստան ե հոճի հոճի .

Չայտոսիկ 'ի միասին խառնել տնւր ըմպել . Բայց թէ հիւանդն չկարասցէ պահել զայս դեղ, և զզուեալ յետ դարձուցցէ, պարտ է կրկին տալ և երկուս, մինչև կարողացի պահել ։ Այս դեղ օգտէ աստուծով և աղատի հիւանդն ։

Եթէ ցաւն իցէ ըստ երրորդ կերպին, յորժամ անդամքն սկսանին կարկամիլ կամ քաշվիլ՝ հանդերձ ցաւով որովայնին, կամ սորոտոյն, պարտ է շուտով երակ հատանել, և արիւն թողուլ մինչև քառասուն կամ յետուն մսխալ . այլև 'ի վերոյգրեւ դեղոյն մատուցանել մի անգամ ։

Եթէ ցաւն ըստ երրորդ կերպին լինի, յորժամ հիւանդն սկսանի ուշաթափիլ և փրփրիլ և թուլանալ, պարտ է յերես հիւանդին յաճախ և շուտ շուտառան ջուր սրսկել և կտաւ ինչ տողորեալ կամ թրչեալ սառն

ջրով, դնել ՚ի վերայ կրծիցն, և ՚ի ջերմա-
նալն՝ փոխել վերստին. այլև տուր հատուտել
զատորև գրեալ դեղն ոգելից կան ըռուհն՝ շուտ
շուտ :

Ընկալ

անուշադր՝ որ է ներշափիք երէւ Քոճիւ
լաւ հէք Տէ՛հ Քոճիւն :
ջր-ը հասարակ համ ընկելի երէւ Քոճիւն :

Ձայս ՚ի միասին լաւապէս խառնեալ, լից ՚ի
մէջ փոքրիկ շիշայի, և գրեբանն պինդ փակել
իհարկաւորութեան ժամու ՚ի գործ անկ :

Եթէ յայս երրորդ կերպն պատահացի
և կարկամիլ կամ քաշվիլ անդամոցն՝ լը եր-
կրորդ կերպին, յայնժամ պարտ է ևս երակ
հատանել և արիւն թողուլ, որպէս գրեցաք
ի վերոյ. և յետ ՚ի յուշն գալոյն հիւանդին,
տուր նաև ՚ի վերոյգրել դեղոյն սովով, թի-
րաքի ջրով և անանուխի իւղով շինեալ :

Եւ բանղի յայսպիսի տկարութեան, հի-
ւանդի սիրան և ստամոքսն շատ անհանդարտ
լինի. եթէ չկարողասցի ընկալնուլ զդեղն հե-
ղուկ կամ ջրի, պարտ է յայնժամ տալ դե-
ղահատ, կամ հապ այսպիսի :

Ընկալ

հէ՛լօմե՛լէ՛նա չսան ցորենաւաշ .
Քիլաւ որ է ամբիօն երէւ ցորենաւաշ .
իւղ անանխոյ ասան և հինգ հմե՛լէ

Ձայս ՚ի միասին խառնեալ հապարս և տուր,
 եթէ և զսոյն յետս դարձուցանէ հիւանդն,
 պարտ է կրկնել շատ անգամ մինչև կարողա-
 նայ սրահել, նաև պարտ է առնել հօղնայ այսու
 դեղորէիւք :

Ընկալ

Ջուր Էրնճի համ Գարուոյ յնոռն հստու

Ջուր Էրնճի համ Գարուոյ յնոռն հստու

Ձայստսիկ խառնել ՚ի միասին կէս ժամէ ՚ի կէս
 ժամ հօղնայ արս :

Եթէ այս ամ դեղորայք չօգտեսցեն ինչ
 և ոչ դադարեսցի լուծումն և փխտումն հիւան
 դին . և սառնութիւն ձեռացն և ոտիցն առա
 ւելասցի, և երեսն բոլորովին կատասցի, և
 զորի բազկին, կամ նամզին առաւել նուազես
 ցի, յայնժամ փութով պարտ է պատրաստել
 զջերմ կամ տաք ջուր . և դնել զհիւանդն
 ՚ի մէջ ջրոյն բոլոր անձամբն մինչև ՚ի պա-
 րանոցն կամ ՚ի վիզն թաղեալ . և յամենայն
 կողմանց լաւապէս ծածկել, և սրահել այնպէս
 մինչև քսան բոպէ, կամ տաղիղայ, եթէ հի-
 ւանդն կարողասցի տոկալ կամ դիմանալ . և
 թէ ոչ, որքան կարէ այնքան մնացէ ՚ի ջուրն
 սակայն մինչև ՚ի պատրաստիլն ջրոյն վասն բո-
 լոր անձին, պարտ է շուտով պատրաստել զսա
 կաւ տաք ջուր, և արկանել ՚ի սօթիլկայս,
 և զայս կապել ՚ի մէջ ափից ձեռացն, և ՚ի
 ներքոյ ոտիցն . և կամ աղիւս, որ է աղուս
 կամ թուղայն՝ ջերմացուցանել, և պատա-

տեալ կտաւով ինչ դնել 'ի նոյն տեղիսն :

Յեա հանելոյն 'ի ջրոյ զհիւանդն , պարտ է լաւապէս սրբել և մաքրել զբոլոր մարմինն , և այնպէս հանգուցանել յանկողնի կամ 'ի դռակի իւրում և ծածկել յամ կողմանց . նաև թիրաքի ջուր քսել 'ի վր ստամոքսի 'ի դրսի կողմանէն , ութն մատնաչափ 'ի վերքան զպորտն . որ թէ չողտեսցէ ինչ՝ կմ շահ չունիցի , պարտ է յայնժամ շղանցի մուխ կոչեցեալ դեղն մաճուճանել կմ կայնել 'ի նոյն տեղին . թողլով 'ի վերայն իբրև ժամս քան և չորս . այլև առնել հողնայ այսու դե զորէիւք :

Ընկալ

Խէ՛լմնդ մին ճաշու .

Խաւսի Խէ՛լմնդ քսան և հինգ ցորենաչաշ .

Քարեջուր ութն քան ճաշու .

Ձ այսոսիկ 'ի միասին խառնեալ . յամէն կէս ժամու կամ սհաթի հողնայ արան . ընդ նմին կրկնեան և զվերոյդրեալ տաք ջուրն , թաղելով դարձեալ զհիւանդն մինչև 'ի վիզն . և պահելով 'ի ջուրն որքան կարասցէ ճեալ , մինչև հանգարտեսցի ամ :

Եւ զի հիւանդն ուն ասացաք շատ ծարաւուի կրէ՛ և պապակի և ջուր խնդրէ , ոչ է պարտ տալ ջուր ամենեւին , որ շատ մնաս է . այլ միայն սակաւ ինչ դարեջուր թոյլ

տալ առնուլ ՚ի բերանն և ողողեալ ՚ի դուրս
 թափել :

Դարձեալ պատահի, որ յետ հանդարտե-
 լոյ հիւանդին և լաւանալոյն՝ միզարկել կամ
 գողկապ լինի . որոյ դեղն այս է :

Ընկալ

որի՛նչ Էմ Գառնայ ասոն Գառնայ .

Գոլ Զո-ր Էրե-ու-ն Էրե-ու-ն Գառնայ .

և ՚ի միասին խառնել տուր ըմպել . ք նմին ա-
 բա և զվերոյդրեալ հողնայն թիրաքի ջրով
 շինեալ՝ մի կամ երկու անգամ . այլև կտաւ
 ինչ ստէպ կմ շուտ շուտ տողորեալ կամ
 թրջեալ ՚ի ջերմ կամ ՚ի տաք ջուր, դէ՛ր
 ՚ի վր փոքրափորին . և կամ զհիւանդն նստե-
 ցուր ՚ի տաք ջուրն :

Այլև պատահի զի հիւանդն շուտ շուտ
 ձգուտայ . եթէ այն ձգուտալն չդադարի, սակաւ
 ինչ լաւ գինի ջերմացո՛, և տուր զի ըմպէ,
 այս օգտէ և ազատէ աստուծով :

Նաև եթէ հիւանդն յետ լաւապէս առող-
 ջանալոյն՝ միայն թուլութիւն ունիցի, սարտ
 է տալ յայնժամ զդեղ զօրացուցանող . այս
 է մի մոխալաչտի բինաբինայ գինեաւ խառնեալ .
 և կամ այլ այսպիսի դառննահամ դեղ :

Իսկ կերակուր հիւանդին յամենայն ժա-
 մանակս տկարութեան իւրոյ ոչ այլ ինչ սար-
 տի լինել, եթէ ոչ՝ խարշած ջուտի ջուրն .
 և կմ նշատայ, կմ սալապ եփեալ մատուցի :

Դիտելէ՛ք ինչ վտան օճանց դեղորեկն ։

Յոմանս ՚ի նշանակեալ դեղորեկնց գտանին
կազմեալք ՚ի զանազան դեղոց , զոր պարտ է
ուսանիլ . որպիսի է թիրաքի ջուրն , որ լա-
տիներէն կոչի դինդիւրաօբիայ ։

Ընկալ

Թէրուս , կամ ափիօն չսան Տոխալ
լաւաֆոյն արաղ . . Հարիւր չսան եւ ուլն Տոխալ
չուր հոբէ կամ ըճպէլէ . Հարիւր չսան եւ ուլն Տոխալ ։

Չայտոսիկ ՚ի միասին լաւապէս խառնեալ
՚ի մէջ պուժիլկայի , դիւյի յարեու աւուրս
տասն և չորս . յետ այնորիկ քամեսցի թղթով .
և այն քամեալ պարղ ջուրն արկեալ ՚ի
պուժիլկայն վերստին , ՚ի գործ արկցի ըստ
պիտեւոյն ։

Այլև գոն դեղորայք ինչ , զորս անհը
նարին է կազմել . զի կարօտին զանազան գոր
ծեաց , և հմտուի . և այսպիսիք՝ ուն և այլքն ,
ուր իցեն դեղավաճառք կամ արգերք , դիւ-
րաւ գտանին առ նս լատինական անուամբն .
իսկ ուր չիցեն դեղարանք իմ արգերք , զանց
արարել զնոքօք , միւսովքն նշանակեալ դե-
ղորեկիւք պարտ է վարիլ . և բաւական է ։
անուն ըստ լատինացոց .

Կելօմիլաս . որ է կէլօմէլան . որ երեւն է ՚ի

Բանի մերուս. էլէն անհնար իցէ յի
 ձեւ. Բերէլ, Բուսակն էն միւս որ
 զորայսն. այնքանս արթունն. և
 ինչն անանխոյ :

Անդճայ դարտիֆուլայ, որ է չնորհնայն
 յըշասակէալն աստանօր :

Եմբլասարմ կէնթէակալիս. որ է շղանցիկ
 հոնն. այն է ճանճ աստանխոյ. ասլէղանի
 կամ հակլամ արած :

Օլիկմ մէնթի բէյբերէգի. որ է ինչն
 անանխոյ :

Մաննայ, որ է որիշան :



Համայնաջինջ զօրուի կալիրամարտի (լատին՝ Cholera morbus), որ անցել 'ի հնդկաստանէ տարածեցաւ դոգրեալ 'ի բոլոր Ասիա, ձգեցաւ և առ մեզ առ խաղաղասէր բնակիչս հիւսիսոյ : Համբաւ 'նրին միայն զարհուրելի բաւական եղև զբաւել 'ի կենաց զբազում ողորմելի անձիւնս, որք 'ի վաղուց լուել էին զահագին ներդոր ծուխս 'նրին : Չոր տեսեալ արթուն կառավարուե Ռուսաստանի ձեռնամուխ եղև 'ի մեծամեծ պատրաստուիս : Նախ՝ մինչդեռ չէր ցաւոյն տարածել 'ի բոլոր Մոսկով, սկիզբն արարին տպագրել զբազում շահաւէտ խրատս առ 'ի պահպանել զանձինս 'ի ցաւոյն . և ապա 'ի տիրել 'նրին բոլորովին մայրաքաղաքիս՝ կառուցանել զառժամանակեաց հիւանդանոցս :

Պատրաստուիքն՝ զորս առնէին, են այսոքիկ . յիմ՝ աւուր երկիցս կամ երկուս անգամ ծխէին զքաղախ, ածեալ զայն 'ի վր ջերմացել աղիւսոյ . զձեռս և զզաշկինակս տողորէին (թրջէին) սակաւ ինչ քացախով և ստէպ ստէպ հոտոտէին . յանկիւնս տան կամ 'ի վր պատուհանից դնէին զաման ինչ լցեալ կրով խառնելով լէհասարակ ջրոյ : Բաց յայսմանէ բժիշկք հրամայեն ևս առնուլ յաբդերքէ զպաքառուդօվանա սմուլա չափով մին ունցիյ . ածել զայն 'ի բուժիլքայ ինչ լցել ռոմով և խառնել զայն 'ի միասին թողուլ օր մի հանդարտիլ . ապա յիմ՝ առաւօտու և երեկոյի ըմպել մի փոքրիկ ռիւմքայ ջուր

խառնեալ մի չայի դրդալ գեղիւս :

Ա. ՚ի տալ գիտուի մերագնէից և գեղանա-
կէն , որով բժշկէին աստ զախտացելս կալիրա
մարպսիւ յառժամանակեայ հիւանդանոցս , ա-
ռաջի առնեմք աստանօր զհամառօտ եղանկ ինչ
բժշկելոյ զտկարացելս կալիրամարպսիւ . որ միա
շունչ ընկալել եղև յառժամանակեայ բժշկա-
կան խորհրդարանէն , որ փորձեալ զայն ՚ի բա-
զում դիպուածս սլատշաճ համարեցաւ հրատա
րակել յօգուտ հասարակաց :

Յորժամ հիւանդն զգայ զցաւ , տնւր նմա
ըմպել մին կերակրոյ դրդալով զմագնէզիւս . ք-
զի մագնէզիւս տրորել ՚ի մէջ ջրոյ , խափանէ
զփսխումն և տայ հիւանդին լուծանել : Ապա
դի՛ր զախտացելն յանկողնի և ծածկեան զնա սա-
ւանով մինչև ցկուրծս . իսկ ՚ի կրծոցն մինչև
ցոտս սիւսեան ՚ի վր սաւանին զմանրոցն կամ ըզ-
մնացորդն չորացել խոտոյ (զորոյ սլատրատելն
ցուցցուք ՚ի ստորև) : ՚ի նոյն ժամու զգասցէ
հիւանդն զգոլորշիս ՚ի մարմնոյն և զոլուանաձև
քրտունս յերեսաց : Թողեալ փոքր մի ներգոր-
ծել գոլորշեացս , տնւր հիւանդին զնոր կտա-
ւիս և սրբեան մաքուր զքրտունս մարմնոյն . ուշ
դի՛ր յայսմ վայրի զի մի մրսեցուսցես և զոչ մի
անդամ ախտացելոյն : Չկնի փոխելոյ կտաւ-
եացն դի՛ր կրկին զհիւանդն յանկողնի և ծած-
կեան սաւանով , լը առաջնոյն սիւսեան ՚ի վր ծած-
կոցին զմնացորդն խոտ ց և կրկնեան զայս երկիցս

կամ երիցս անդամ : Յորժամ այս այսնս առ-
նես հիւանդն զգայ զհանդարտութի . փսխումն և
լուծումն դադարի և նա նոյնժամայն ննջէ, որ-
ով և ցաւն անձնաս խափանի :

Յետ առողջանալոյ հիւանդին , զորայն զնա
լաւ հօֆֆմանեան կաթլովք , տալով նմա յնմ
առուր յերեկոյի և յառաւօտու տասն տասն կա-
թիլս , և կերակրով որ բազկանայ ՚ի ջրոյ՝ լաւ
մաքուր մսի եփելոյ լի դարւոյ . ընդ սմա տնւր
ուտել հիւանդին սպիտակ հաց , բայց մի ամե-
նելն կերիցէ թթու հաց , և զայլ աղի իրս .
կամ ըմպիցէ զթթու ըմպելիս :

Պատրաստութի նապորդի խոտոյ :

Ա՛րկ զչորացեալ մնացորդս զայստսիկ յաման
ինչ և թրչեան զայնս եռացել ջրով , բայց մի լի-
ցի հեղհեղուկ . ապա խառնեան զայն փայտեայ ի-
րօք ինչ և նոյնժամայն ծածկեան , զի մի գոլոր-
չիքն ցրուեսցին : Յետ այսորիկ՝ յորժամ մնա-
ցորդքն խոտոց ծածկեսցին գոլորչեօք՝ հան զայ
նըս և սիւռեան ՚ի վերայ սաւանի հիւանդին ուղ
ի վերոյ ասացաք :

Սրտեռանդն կարեկցութի առ ողորմելի ակա-
տացեալս կալիւրամարսիւ ոչ տայ մեզ բաւա-
կանանալ այսու երկոքումքք եղանակօքս , զոր
ի վերոյ ցուցաք . այլ անհրաժեշտ պարտաւոր
կացուցանէ զմեզ յերևան ածել զնմ ինչ որոյ
միանգամ խմացելէ օգուտն : Անչ ոչ անտեղի
համարիմք նշանակել յայտմ վայրի զայլ եզս

նակ ևս բժշկելոյ զհիւանդացեալս կալիբա-
մարսսիւ, զորոյ թէնս օգուան մեք անձամբ
անձին չեմք տեսեալ, բայց լուեալ յարժանա
հաւատ բժշկաց՝ որք զշահնորին ոչ ուրանային:

՚ի նոյն խկ ՚ի պատահել ցաւոյս .

նախ պարտ է՝

Թողուլ զարիւն կէս չայի թաս .

յետոյ ըմպել փոքր ինչ ձիթենւոյ լուղ :

Իսկ ՚ի սկսանիլ կարկամիլ անդամոյն արո-
րեան զբոլոր մարմին հիւանդին քայտախով
խառնելով ընդ ոռուսի պիպարի, խստորի և
խալդարի . ապա ՚ի վերայ կրծոցն դի՛ր զբը-
լիթ (ցո՛ւ Լէբեօշքա) խառնեալ խալտարիւ :
Ամ մարթ է ևս՝ դնել զզգրուկս ՚ի վերայ
կրծոցն, և ապա արորել զանդամս հիւան-
դին կանֆարայիւ . ասեն ևս՝ ոմանք ՚ի հը-
մուտ բժշկաց թէ՛ փանղահրն արկեալ ՚ի
վարդի ջուր և տուեալ հիւանդին բազում
օգուտս բերէ :



Ի վերայ շարաշար անդից, զոր իստապիտէ հո-
շն՝ Գեղարքէ Բեռնիչիօղա :

Տենդոս այս չարարար՝ է ախտ ինչ դժնադակ
և իբր թիւնաւոր, յազգէ ընդհատ տեն-
դից, որ սովորաբար առաւել տիրապետէ յաշ-
նան՝ քան յայլ եղանակս տարւոյ : Առա-
ւել գտանի ախտս այս յեւրոպիա, և յայլ
նահանգս ինչ իդալիոյ, մանաւանդ ՚ի տեղիս
ցածագոյնս և դեճս, և այն առաւելապէս ՚ի գիւ-
ղականս, որք բնակին յայդպիսի գիճային
վայրս, և ապրին դժուարամարսելի կերակրե-
ղինօք : Չիք տենդ ինչ այնքան շուտափոյթ
մահահրաւեր իբրև տենդոս այս. որ և բա-
զում անգամ ՚ի միջոցս քսան և չորից ժա-
մուց, կամ յերկուս և յերիս աւուրս սպա-
նանէ. յայն սակս պատշաճ վարկաք տենդ-
չարարար անուանել : Երկոտասան են տեսակք
այսր տենդի, որք զանազանին ՚ի միմեանց ան-
ուանադրուք, երևուլթիւ, նշանաւ պլուվքն
հանդերձ. զորս մի առ մի տեսցես բացատրել
յառաջիկայդ :

Առաջին տեսակն կոչեցեալ յիտալացոց՝
Ֆիսպուէ բէռնիչիօղա քօլէպիքա, այսինքն
տենդ չարարար և զայրազին, որ պատահի յան-
բարեխառնութիւ և յառատութիւ սուր և ա :

պահանեալ մաղձից , և այլ հիւթոց , յան-
 մարսուէ , և 'ի կերակրոց , որք դիւրաւ
 թթուին 'ի սդամոքսն . որպիսի են կոզի ,
 ճարսն մսոց , քաղցրաւենիք , ձմերուկն , սեխն ,
 կեռասն , և այլ միրգք , որք են զով և թուլա-
 ցուցիչ բնուի : Երբեք ևս պատճառի յուժ-
 գին լուծիչ և ործուցուցիչ դեղորէից , 'ի վնասակար սունկոց , և 'ի թիւնաւոր դեղորէից մը-
 տելոց 'ի ստամոքսն , 'ի սաստիկ կրից և յերկիւ-
 դէ , 'ի ցրտուէ 'ի տոթագին ջերմուէ և 'ի
 թանչացաւուէ : Սա նախ բերէ սաստիկ լու-
 ծողութիւնն 'ի վերուստ և ստորուստ , և ապա
 ուժգին ջերմութիւն 'ի ծագն ստամոքսի և աղեաց ,
 անձկութիւն , ճնշումն կրծոց , կերկերումն ձայնի ,
 և ձգւումն . տկարանայ տեսութիւն աչաց ախտա-
 կրին , և եթէ այսպիսի լուծողականութիւն յարա-
 տեէ , ոչ է մտրթ նոց այլևս պատասպարիլ և
 սթափիլ : Դարձել՝ ախտակիրն կրէ զժրւ սաս-
 տիկ և զարկն բազկի լինի՝ արագ մանր՝ գաղտնա
 դոյն՝ և անհաւասար . իսկ 'ի յարատե յառա-
 ջանալ ախտիս զարկն նուազի այնքան՝ մինչև
 լինի անզգալի . ծայրք անդամոց ցրտանան . 'ի
 վեր երևի ցուրտ քիրտն միայն յերեսս . մէզն
 լինի արգելական , և ստէպ ստէպ զգայ զգողո-
 ջումն սրտի . ձեռք և ոտքն ցրտանան և փոխար
 կին 'ի դոյն կապոյտ . կրէ զոյգ ը ախտիս և ըզ-
 թալկութիւն , զուշագնացութիւն և զհեծկւտանս :

Այլ գիտե՛լ արժանն է . զի 'ի դադարիլ տեն
 դի՛ զոյգ լը նմին դադարին և վերոյիշել նշանքն
 բոլորովին : Բայց եթէ ատն լիովին թափել
 իցէ զթոյն իւր և արմատացել, յայնժամ լինի
 յոյժ վտանգաւոր և երկիւղալի, և առաւել ք
 զամ աղետալի է այն, յորժմ վերստին դարձ
 առնէ լուծողուն այլովքն հանդերձ : Դարման
 նորա են խթիչ սեղմիչ և խաղողիչ դեղորայքն .
 ոսկի են՝ ջուրն կինամոնի կամ անանխոյ . լիզ-
 ուօռէ անօտինօ . և լաւտանօ լիզուխո : Չոր
 օրինակ . սա երկու ունկի՛ ջուր կինամոնի կմ
 անանխոյ, և երեսուն շիթ լիզուօռէ անօտինօ
 մինէ աւելէ հօֆֆման . յաւելլով 'ի նոյն 2½
 շիթ՝ լաւտանօ լիզուխո . և տնր ըմպել հի-
 ւանդին յամ ժամու մէն մի դրդալ սեղանոյ
 մինչև ցդադարուքն ատիս : Ըմպելին նք սար
 տի լինել ջուրն խորովել հացի՛ եթէ դտանիցի
 առ ձեռն ստոքստ՝ օգտակար ազոյն ևս է հայն
 վար սակի : Եթէ այսու նպաստիւք ոչ դադրի
 վրսխուքն և լուծուքն որովայնի, յայնժամ օրէն
 է տալ նմա ժամէ 'ի ժամ երկու դրդալ սեղանոյ
 ճիւլապակէ տի սալինա . յորոյ վք սարտ է յա-
 լելուլ 15 կմ 20 կաթիլ լաւտանօ լիզուխո :
 Նոյնն և օգտաւէտ է թրմոյն երիցկի, և սիէ-
 ոօ տի լաթթէ վինօզօ ֆօռթէ՛ առ 'ի պահպա-
 նել զոյժ ատտակրին, և առ 'ի շարժել զարտա
 շնչուի մարմնոյ : Նոյնն և կարեւոր և օգտա-
 կար է թանալ զոտս ատտակրին 'ի մէջ ջերմա-

գին ջրոյ , և յետոյ բարևոք չորացուցել ջերմ պաստառաւ՝ դնել 'ի նրբանսն ոտից զջերմ կղմինդրս : Իսկ եթէ կիրառութիւն այսոցիկ դեղորէից չիցէ հնար ստանալ զտենչացեալ ներգործուի և զօգուան , յայնժամ պարտ է տալ ախտակրին վեց անգամ յաւուրն ընկուզա չափ զհետագայ դեղն : Ա՛ռ երկու տրամ՝ սալ տի սօտա , զոր մարթ է լուծանել բաւականաչափ հիւթով կիտրոնի՝ յաւելլով 'ի նոյն տրամ մի էթէռէ . երկու տրամ՝ թինթուռա տի սուչչինօ , չորս տրամ՝ քօնֆէցիօնէ ճիւղինթինա , և նոյնչափ՝ շաքար սպիտակ և մաքուր :

Ընդ այսոցիկ գլտել արժան է՝ զի զկնի դադարման տենդիս պարտ և պատչաճ է փոյթ ընդ փոյթ ձեռնամուխ լինել 'ի գործածութիւն քինա քինաի առ 'ի խափանել զվերադարձումն այսպիսի դժնդակ և զայրագին տենդից : Յայսպիսի դիպուածս օրէն է լոյծ պահել և զորովայնն սոսկապէս 'ի ձեռն թեթեւ գրեխաց՝ յօրինելոց երիցկաւ , և այլ խթիչ դեղորէիւք : Աերակուրքն պարտին լինել սնուցիչ և կարի սակաւ քանակութիւն , և չափաւոր ինչ շարժումն է ևս շահեկան :

Երկրորդ տեսակն կոչի յիտալացւոց՝ ֆէպպուէ բէռնիչիօզա տիսէնթէռէքա . այսինքն տենդ չարարար խառն ընդ արիւնային փոր-

Հարուժե՛ն : Պատճառք սորա գրեթէ նոյն են
 ընդ պատճառուոյ չարարար և զայրագին տեն
 դի . որպէս աւանդեցաւ վերագոյնդ : Ի դի-
 պուածս ախտիս հասարակօրէն զուղընժաց
 լինի ջերմութի՛ ուժգին , արիւնային փորհա-
 րութիւն , խիթք սրբանին , սաստիկ ցաւ
 ստամոքսի և ստորին որովայնի , նողկանք սրտի
 և հեծկլտանք . լեզուն լինի չոր և խիստ ,
 մէլն թանձր և քրքմագոյն , զարկ բազկին լի
 նի մանր և արագ . կղկղանքն ՚ի սկզբան անդ
 լինի մաղձագոյն , ապա մաղասային , հուսկ յե-
 տոյ արիւնային . երբեմն ախտակիրն բռնուք
 շարժի ՚ի փսխել . այլ ՚ի դադարիլ տենդի՛
 զոյդ ընդ նմին անհետ լինին և նշանքն : Աւ-
 եթէ տենդս այս երեք կամ չորս անգամ
 դարձ առնէ մի զկնի միոյ , ոչ է մարթ ախ-
 տացելոյ այլևս պատասարիլ և սթափիլ .
 որոյ դեղ է նախ՝ տիասքօռտիօ , կամ լաւտա
 նօ լիզուխտօ , ջուրն անանխոյ կամ կինամո-
 նի . և ապա քինա քինա առատօրէն :

Արրորդ տեսակն կոչի՛ Փէպպուէ բեռնիչիօ
 զա սուսքուռէնժա , կոչի և ըստ նախնեաց՝
 Փլուսօ էբաթիքօ . այսինքն հոսու՛ն լերդա
 կան : Տենդ այս չարարար՝ դուշակի ՚ի ստէպ
 ստէպ արտաթորմանէ մագոյն հիւժոյ խառն
 ընդ կղկղանաց , հանդերձ նուազմամբ սրտի ,
 ցրտուք ձեռաց և ոտից , նուազմամբ ձայնի ,

և տագնապաւ շնչառուք : Դարձեալ՝ որպէս
 'ի դիպուածս այլոց չարարար տենդից, նոյն-
 պէս 'ի դիպուածս յայս թուլանան զօրուիք
 ջղաց և բոլոր մարմնոց • զարկ բազկին բազ-
 խէ մանր, և նուրբ • որոյ սեփական դեղ է
 քինա քինա, զոր օրէն է տալ առատօրէն :
 Այլ եթէ տենդս այս վերակրկնէ, անվրէպ
 սպանանէ : Բայց երբեք ևս դէպ լինի, եթէ
 ախտակիրն իցէ երիտասարդ, և վիճակեալ
 զօրեղ կազմուածոց, զի յերկարուէ ախան,
 և յայնժամ կոչի՝ քոօնիքա :

Չորրորդ տեսակն չոկի՝ ֆէպպուէ բէռնի-
 չիօզա քառախքա : Տենդս այս չարարար՝ ճա-
 նաչի 'ի սաստիկ ցրտոց, 'ի ջերմութի, ընդ ո-
 բում զուգընթաց լինի և սրադոյն իմն ցաւ
 'ի վերին ծագն ստամոքսի, 'ի ստէպ ստէպ
 ուշագնացութի, 'ի տաղտկութենէ, 'ի դժգու-
 նութի դիմաց, 'ի հառաչանաց, 'ի հեալոց, 'ի
 կաղկանձմանէ, և 'ի վոքրիկ բաղխմանէ շնչե-
 րակին • որոյ դեղ է ջուր կինամոնի, լաւտա
 նօ լիդուխոօ, լիդուօռ անօտինօ • և այլ սոցին
 նման խթիչ և խաղաղացուցիչ դեղորայք,
 և յետ այսոցիկ քինա քինա : Գիտելի է՝ ե-
 թէ տենդս այս չորս կամ հինգ անգամ դարձ
 առնէ, անվրէպ սպանանէ :

Հինգերորդ տեսակն անուանի 'ի նոցանէ՝
 ֆէպպուէ բէռնիչիօզա քառախքա տէլ սօվա-

Ճօ, այսինքն չարարար տենդ ործայուցիչ՝
 գտեալ ՚ի վերջին ժամանակս ՚ի սօվաճօ բշկէ:
 Սա նախ բերէ դողուճն և ջերմութիւն սաս
 տիկ, և սպա ստէս ստէս փրստումն, յա-
 րակցեալ ՚ի նոյն ցաւ ստամոքսի, և ուժգին
 ծարաւ. որոյ դեղ նոյն է ընդ վերնոյ: Բայց
 եթէ զարկն լինի ուժեղ և լի, և ՚ի վեր երևին
 նշանք եռայման. յայնժամ նախ պիտոյ է ե-
 րակահատուի, և սպա ՚ի կիր առնուլ զքինա
 քինա:

Ա եցերորդ տեսակն յորջորջի՝ ֆեպպոէ բեռ
 նիչիօզա ախաֆօռեթիքա. այսինքն չարարար
 տենդ բրանաբեր: Սա նախ բերէ քիրան յոր
 դառատ, և սպա դողուճն և ջերմութի ուժ
 գին, զուգընթաց ցրտութեանգամոց, և թու-
 լութիւն ջղաց և բոլոր անդամոց, և տազնա-
 սլաւ չնչառուէ. մին ՚ի մեծադոյն փասուց
 որ միշտ կից գտանի ընդ ախտիս՝ է արագումն
 տուրեւառուէ շնչոյ, և հաշումն բովանդակ
 մարմնոյ մանաւանդ մանրուին, արագուին, և
 անզօրութիւնն զարկի բազկին: Երբեք մարթ
 է ՚ի դիպուածս այսորիկ տենդի ստանալ զա-
 սպքինուի, եթէ փոյթ ընդ փոյթ ՚ի կիր
 արկանիցի քինա քինա ՚ի սկզբան անդ տեն-
 դիս. բայց եթէ ախտն ժամանեացէ յաստի-
 ճան ինչ, հասարակօրէն անպտուղ և վայրա-
 սլար լինի նպասան քինա քինա, և այլ ամե

Նայն դեղորկէից , և առաւել քան զամենայն վտանգաւորագոյն է այն , յորժամ վերագարծցի տենդն :

Եօթներորդ տեսակն կոչի՝ ֆեպպուէ բէռնիչիօղա սինքօբալէ , այսինքն չարարար տենդ թալկայուցիչ : Սա գուշակի ՚ի յաճախակի թալկայմանէ , որ ՚ի դոյզն ինչ շարժմանէ ճնանի նուազումն սրտի . դողումն և ջերմութի որ զուզընթաց լինի ընդ տենդիս այսորիկ՝ երբեքն լինի առաւել և երբեքն նուազ . զարկ բաղկին հատանէ արագ , մանր յոյժ և նուրբ . քիրան ՚ի վեր երևի միայն ՚ի ճակատն և ՚ի պարանոցն . աչքն տկարանայ , և մթազնի . և եթէ ոչ աճապարեալ փութով դարմանեսցի , մեռանի անվրէպ . որոյ դեղ է հոտոտալ զիրս զօրացուցիչս և սթամիիչս . որպիսի են՝ մելիսսէ , լիգուուս անօտինօ , ևն , արբուցանելով ստէպ քինաքինա :

Ութերորդ տեսակն ասի՝ ֆէպպուէ բէռնիչիօղա ալճիտա . այսինքն չարարար տենդ սառուցիչ : Սա ճանաչի ՚ի սաստիկ դողդոջմանէ և ՚ի ջրոյ . իբր զի թէ ոք ըմբռնեսցի յախտէ , առժամայն ամենայն անդամք մարմնոյն ցրտացեալ սառին , մինչև լինել իբր դի այլագունեալ գլխովին . զոր յայն սակս կոչեն տենդ ցրտասառոյց . և ցրտութիս այս յարատեւեալ մնայ մինչև ցաւարտ տենդիս՝ առանց

ջերմանալոյ ամենեւին • սովորաբար զուգըն
 թաց լինի և ծարաւ ինչ ուժգին , չորուի և
 կարծրուի լեզուի , և կերկերու՞ն ձայնի : Ի
 վախճան տենդիս , (եթէ կեցցէ աստակիրն)
 ՚ի վեր երևի ջերմութիւն ինչ թեթեւ , և
 տարածանի ՚ի զանազան մասունս մարմնոյն՝
 մանաւանդ ՚ի ծայրոն • և յայնժամ օրէ՛ն է
 խկ և խկ ձեռնամուկս լինել ՚ի գործածու-
 թիւն քինաքինաի առ ՚ի արդելուլ զվերա-
 դարձու՞ն այսորիկ տենդի չարարարի :


Իններորդ տեսակն անուանի՝ Ֆէպպուէ բէռ-
 նիչիօղա բլէուուիթիքա , այսինքն տենդ չա-
 բարար կշտային • զոր մարթ է ճանաչել ՚ի
 ցրտոյ , ՚ի սարսափոյ , օրում զհետ զայ ջեր-
 մուի , պտոյտ զլխոյ , նոզկանք սրաի , վախու՞ն
 և ծարաւ սաստիկ : Եւ զինի այսոցիկ հիւանդն
 զգայ զցաւ ինչ ուժգին և խայթիչ ՚ի մի
 կողմն կրծոց կամ ՚ի կուշան , մանաւանդ ՚ի
 վայրկենի՝ յորում աստակիրն հազայ : Չարկն
 բազկի լինի արագ , խիստ , և անկանոն , մեզն
 թանձր և մըրրալից • կրէ հազ սաստիկ , և
 ցնորու՞ն , և դժուարաշնչուի , որոյ դեղ նոյն
 է ընդ դեղոց բորբոքման թոքոց • և ՚ի դա-
 դարիլ նշանաց՝ օրէ՛ն է խկ և խկ ձեռնա-
 մուկս լինել ՚ի գործածուի քինաքինային ք
 եղանակին՝ զորմէ նշանակեցաք ՚ի տեղի իւ-
 րում :

Տասներորդ տեսակն կոչի՝ ֆէպպուէ բէռնիչիօղա քօլիբա, այսինքն չարարար տենդ խիթաւոր : Աստու այս հասարակօրէն զոյգ ունի ընդ իւր զանհնարին խիթա ստորին որովայնի և արգանդի, զվերախառուի, զնողկանս զանձկուի, զործուֆն զչորութիւն լեզուի, և զսաստիկ ծարաւ : Չարկ բազկին լինի մանր և անկանոն. երբեմն ևս հոսէ զքիրտն ցուրտ. և դեղն՝ դրեխ կակղացուցիչ, ֆօմէնթա, արբուցանելով թիւրակէս, լաւտանօ լիզուխոօ, և այլ դեղս խաղաղիչս. երբեմն մարթ է ևս երակ հատանել, եթէ իցէ զօրեղ և խիստ զարկն բազկին : Եւ զինի դադարման տենդին՝ օրէն է փոյթ ընդ փոյթ ՚ի կիր արկանել զքինաքինա առ ՚ի խտիանել զվերա դարձուֆն նորին :

Մետասաներորդ տեսակն ասի՝ ֆէպպուէ բէռնիչիօղա սօբօօղա, այսինքն չարարար տենդ թմբբեցուցիչ, կամ քնաբեր : Յօրժամ սկսանի ոք ըմբռնիլ յախտէս յայսմանէ՝ լինի թմբբեալ և ախշեալ, մինչև լինել իբր ննջեալ կամ արբեալ անզգայ գլխովին, կրելով զուշաբարձուի. երբեմն և զհետ գայ թլուատուի լեզուի, և երբեմն հեծկլտանք : Եւ եթէ տենդս այս երկու կամ երեք անգամ դարձառնէ, անվրէպ սպանանէ. որոյ դեղ է երակահատուի, լուծողական

գրեխք, խարանադեղ, և այլ դարմանք որք
պատճառեն զսթափուի: Եւ յետ դադար-
ման տենդիս օրէնէ առատօրէն ՚ի կիրարկա-
նել քինաքինա:


Իսկ երկոտասաներդ տեսակն անուանի՝ Ֆէսլ
պէս բէռնիչիօղա չիէքա տէլ մօռանտի, այ-
սինքն չարարար տենդ կուրացուցիչ՝ դտեալ
՚ի մօռանտի բժշկէ: Ըմբռնեալքն յախտս
յայս լինին իբր կոյր, զոյգ ունելով ընդ իւր
զլօրանջուքն, զկերկերուքն, զցըրտուի, զլոզ
դոջուքն զանուժուի ձեռաց և ոտից, զանձկուի,
զնողկանք սրտի, զծանրուի և զցաւ գլխոյ,
զփսխուքն՝ զթուլուի ջղաց և բոլոր մարմ-
նոյն, զցնորուքն, զթմբրութիւն, զծարաւ
սոստիկ, զպտտուքն գլխոյ, և զթախժուքն:
Չարկն բազկի հարկանէ նուաղ՝ խիտ՝ և
անզօր. և մէղն մըրալից, և թանձր: Եւ յի
դադարիլ տենդի՝ զոյգ ընդ նմին դադարին և
նշանքն բոլորովին. և դեղն՝ երակահատուի.
լուծողականք, և խարանադեղք: Եւ յետ ա-
ւարտելոյ զտենդն՝ ՚ի կիր առնուլ զքինաքինա:



Համարում ճանօթեցնելն լատին լիճակաւոր

Արք. Եպիսկոպոսոսց առևանջաբնակ

Հայոց :



՚ի ժամանակաց անոյի մեծին Պետրոսի և
կայսերուհւոյն Աստարինէի երկրորդի և այլոց
յետագայ կայսերաց՝ վիճակաւոր արքեպիսկոպոսք
Հայոց ՚ի Ռուսաստան բնակելոց, միշտ
արժանացան մատչիլ յամենողորմ աթոռ Նոյս
և ընդունիլ զյատուկ կայսերական խնամս՝
թէ ՚ի սակս սրաշտօնի հողևոր հովուուեք և թէ
՚ի նպատամատոց լինիլ քաղաքաց և հասարակուեց
Հայոց բնակելոց ՚ի Ռուսաստան, ՚ի
Արաստան և ՚ի Պետասարապիա . որոց թիւ հասանէ
ցմիլ իոն մի : Որք քանզի լս մեծի մասին
յորդորանօք հովուացն եկե՛լ են յայլ անբուեց,
վս այն և լս հաւատոց սուրբ են յարգել զնս իբրև
զառաջնորդս և զհարս :

Ասն այսր պատճառի արքեպիսկոպոսք
Հայոց շարժե՛լք ճշմարիտ նախանձայուզուք
՚ի պաշտօնէ առ նոր հայրենիս իւրեանց, միշտ
հողացան անկել և արմատացուցանել ՚ի հօտի
իւրեանց, ու՛ղ հարք ՚ի գերդաստանս, զբարի
միաձայնուի չ զճշմարիտ լուսաւորուի և զմիա-

չունչ բերուին 'ի խաղաղ պաշտօնատարուին
 հասարակականս : Ողևորեալք նոյնպիսի սխրա-
 գործուքք 'ի ժամանակս պատերազմաց և խա-
 ղաղուեր լը տաճիկս և լը պարսս, ոչ 'ի դերև հա-
 նին նք զառիթս ուղղելոյ զգիտաւորուի ազգին
 յայն ինչ՝ յոր ձգէր և Ռուսաստան . այլ 'ի
 ներքս կոչմամբ զժողովուրդս իւրեանց միշտ
 բաղմացուցին զընակիչս այսր տէրուեր . ուի յայտ
 է 'ի Առամաթիոյ պարգևելոյ այլևայլ հասա-
 րակուեր հայոց և 'ի մեծախառ Ուքազիոյ հրա-
 տարակելոյ վասն սոյնօրինակ պատահմանց :

Յայսպիսի կենցաղօղուտ հայրենասիրուի
 հովուացն հայոց Առավարուի տէրուերս հա-
 յեցաւ ողորմածուք , և արժանացոյց զնս զա-
 նազան պատուանշնա ա գերազանցուեր , թէ 'ի
 վիպուի արժանաւորուեր նց և թէ 'ի ցոյց Այ-
 սերական գթուերն առ բոլոր ազգն Հայոց :

Այսպիսի գերազանցուք պատուեցաւ արքե-
 պիսկոպոսն Յովսէփ 'ի ժամանակս մեծի թա-
 գուհւոյն Ատտարինէի երկրորդի , ընկալել 'ի
 նորին Այսսերական մեծուէ զականակապ տնա
 կիտ՝ զխաչ՝ զփիլոն (մանթի) և զականակապ
 խաչ 'ի վր զեղարի , և 'ի տէրուեր Պօղոսի առաջ
 նոյ զառաջին աստիճան պատուանշանի սքն Ան
 նայի . նոյնն ընկալաւ ևս զիշխանուի (քնեա-
 ղուի) Ռուսաց տէրուեր արղութինսքիյ Տոկո-
 ռուքով կոչեցեալ , այն է՝ երկայնաբաղուկ Ար-

դու թեանց : 'Ի նմին ժամանակի վարդապետք նորին ընկալան զերկրորդ աստիճանն նոյն պատուանշանի . խկ աւագ քահանայք՝ զականակապ և զոսկի խաչս :

Արքեպիսկոպոսն Ափրեմ 'ի ժամանակս Աղէքսանդրի առաջնոյ ընկալաւ զառաջին աստիճանն պատուանշանի սբյն Աննայի, զականակապ խաչ 'ի վր վեղարի, և ապա յաւուրս կաթողիկոսուն զպատուանշանն սբյն Աղէքսանդրի Նեվսկոյ :

Արքեպիսկոպոսն Ներսէս 'ի Արաստան բնակեալ Հայոց 'ի ժամանակս կայսեր Աղէքսանդրի առաջնոյ պատուեցաւ պատուանշանաւ սբյն Աննայի առաջին աստիճանի և ականակապ խաչիւ 'ի վերայ վեղարի :

Արքեպիսկոպոսն Յովհաննէս 'ի Ռուսստան բնակեալ Հայոց յորժամ էր 'ի Պեսսարապիա ընկալաւ զպատուանշանն սբյն Աննայի առաջին աստիճանի :

Արքեպիսկոպոսն Գրիգոր 'ի Պեսսարապիա բնակեալ Հայոց՝ 'ի նոյն թագաւորէն պատուեցաւ պատուանշանաւ սբյն Աննայի առաջնոյ աստիճանի և ականակապ խաչիւ 'ի վր վեղարի :


'Ի ժամանակի թագադրուն Այսսերն Նեկողայոսի Յովհաննէս արքեպիսկոպոսն 'ի Ռուսստան բնակել Հայոց պատուեցաւ ականակապ խաչիւ 'ի վերայ վեղարի . խկ Գրիգոր արքեպոսն Պեսսարապիոյ պատուեցաւ խաչիւ

սըյն Ալատիմիրայ երկրէ աստիճանի : Առ նս
եղեալ վարդապետք և այլ վարդապետք և ա-
ւադ քահանայք ոմանք արժանացան պատուա-
նշանի երկրորդ և երրորդ աստիճանի սըյն Ան-
նայի և չորրորդ աստիճանի սըյն Ալատիմիրայ
խկ այլք ընկալան զականակապ և զոսկի խաչս :

Ի դնելն զդաշն խաղաղուէ ը Պարսս ՚ի 1828
ամի , վիճակաւոր արքեպիսկոպոսն ՚ի Արաստան
բնակեալ Հայոց Ներսէս՝ արժանացաւ մեծա-
փառ Առամաթի և պատուանշանի սըյն Աղէք-
տանդրի Նեվսիկոյ և ըստաջարկուէ նոյն արք
եպիսկոպոսին՝ եկեղեցականք Հայոց եղեալք
Ի Հայաստան և ՚ի Արաստան մեծեալ են ՚ի
չարս պակեւոց պատուանշանաւ սըյն Աննայի
երկրորդ և երրորդ աստիճանի և սըյն Ալատի
միրայ չորդ աստիճանի : Բայ յայդցանէ և ո-
մանք ՚ի քաղաքական անձանց արժանոցան այլև
այլ աստիճանայ ըստաջարկուէ նոյն եպիսկոպոսին :

Ի յունվարի 1828 ամի ընծայեաց տէրուին
մեծի պատրիարքին բոլոր Հայաստանի և Ար-
թողիկոսին Էջմիածնի զականակապ նշան սըյն
Աղէքսանդրի Նեվսիկոյ :

Ի հոկտեմբերի 1830 ամի Արտուկեա վիճա-
կաւոր արքեպիսկոպոսն Հայոց Արղէրում նա-
հանգի արժանացաւ պատուանշանի սըյն Աննայի
առաջին աստիճանի ՚ի սակս ծառայուէն մա-
տուցելոյ Տէրութեանն Ռուսաց :



Համարոյ Տոնօթեալիւն վանն Հայ-

է-էան Տէմարանիւն Տեաքց Լազա-

րէանց :



Հայկական աղղալոյս Ճեմարանն Երևե-
լեան լեզուաց, որ արդէն երևելի դաեալ ընդ
ամ Ռուսաստան յինքն հանդոյց զհովանաւո-
րուի տիեզերակալ կայսերն Ռուսաց, ընկա-
լեալ 'ի նմանէ զանուն Ինստիտուցի (որ է Ճե-
մարան), կառուցաւ 'ի Մոսկով 'ի ներգործա-
կան ներքին խորհրդականէ 'ի հրամանատարէ
և ասպետէ Յովհաննու Լազարեանց և յերջան
կայիշատակ եղբօրէ նորին յիշխանապետէն Յո-
վակիմայ Լազարեանց 'ի 1816 ամի . որք 'ի
պէտս մշտնջենաւորուի սորին եղին զմեծ գլուխ
դրամոյ 'ի կայսերական լամբարդն յարդիւնա-
բերուի, այլ և թողին զպէսնս շինուածս, յո-
րրս և զայլ բազումս յաւելին երեք որդիք վե-
հազնեայ իշխանապետին Յովակիմայ Լազա-
րեանք, որոյ ամենեցուն գին ցամն 1830 հաշ-
ուի իբր միլիոն մի ռուսլի :

Նպասակ Ճեմարանիս է նախ՝ պատրաստել
զմանկունս յարբունի զինուորական և 'ի քաղա

քական պաշտամունս : Երկր՝ ուսուցանել ըզ
 դիտնական և զգործնական ուսմունս արեւելնն
 լեզուաց , առ ՚ի պատրաստել զթարգմանիչս
 հարկաւորս տէրուէ ՚ի քաղաքական և ՚ի վաճա
 ւական կապակցուիս ընդ ասիական տէրուիս :
 Երկր՝ հասուցանել զվարժապետս ՚ի պէտս հայ
 կական դպրոցաց յայլ և այլ քաղաքս ռուսու
 տանի և հայաստանի հիմնելոց : Չրի՞ր՝ հան
 դերձել զուսուսուրնլ պաշտօնեացս եկեղեցւոյ
 ըուսուսուրչիւրօն հայոց : Եւ հինգերի՞ր՝ պատրաս
 տել զբժիշկս : ՚ի կառուցմանէ անտի ճեմա
 րանիս մինչև ցայսօր՝ աշակերտք իբրև չորեք
 հարիւրք աւարտեալ զընթացս ուսմանց մեկ
 նեալ են ՚ի զանազան քաղաքս Ռուսիոյ և նուի
 բեալ զանձինս յայլ և այլ պաշտամունս , ՚ի սո
 ցանէ իբր յիսուսք օրինաւոր հարցաքննուք
 Այստերական համալսարանին մոսկովայ ընկա
 լեալ են զարժանաւորուի ուսուսնասիրաց՝ որ է
 սաուդէնդից և գանդիտատաց :

Քեմարանս մինչև ցամա 1827 , օգոստոսի 19
 կայր ի հոգատարուք զօրագլխապետին թնդա
 նօթական զօրաց Արաֆ Ալէքսէյ Անդրէասնն
 Արակչևի , զօրուք հրովարտակին տուելոյ ՚ի
 մեծ Այստերէն յԱլէքսանդրէ աւաջնոյ ՚ի 30
 յունիսի 1825 ամի : Իսկ յօրէն 19 օգոստոսի
 1827 ամի , ըստ օրինակի այլոց ուսուսնական
 դպրոցաց՝ անկաւ ի վերատեսչուք նախարարին

ազգային լուսաւորուէ , ապա ըն օրագրուէ նա-
խարարակոյտ ժողովոյն (.քովիդէդ) ՚ի 1828 ա-
մի հաստատուի Նորին Ապսերական մեծուէ
յանձնեցաւ զօրագլխապետին հեծելազօրաց
ղեներալի Աղէքսանդրու քրիստափօրնն Պեն-
կենդորֆի : Հօրաբարձու Ճեմարանիս է այժմ
անդրանիկն յորդիս իշխանապետին Յովակի-
մայ Պետական խորհրդականն և Ասպետն
Յովհաննէս Յովակիմեան Լազարեանց . Առ-
ուավարիչ է եղբայր սորա Պետական խորհր-
դականն և Ասպետն Խաչատուր Յովակիմեան
Լազարեանց . Անդամ խորհրդարանի Ճեմա-
րանիս է եղբայր սոցա Հազարապետն (իմ պոլ-
կովնիկ) և Ասպետն Ղազարոս Յովակիմեան
Լազարեանց . Իսկ Կարգավար է ՄեքայէԼ
ճայրագոյն Արդապետն Սալլանթեանց :

Բաց յայսցանէ դտանին և այլ պաշտօնա-
տարք , սյն է , վերատեսուչ , կրօնուսոյցք յե-
կեղեցականաց , դասատուք , աւագ և կրտսեր
ուսուցիչք , վերակացուք , բժիշկ ՚ի հիւան-
դանոցի վս տկար մանկանց , անտես , առնա-
դպիր , համարակալ , դատաքննիչ դրոց , կա-
ռավարիչ տպարանին , և այլք , որոց թիւ հա-
սանէ իբր ցերեսուն , և որոց ոմանք են ՚ի հա-
մալսարանէ տէրուէն : Առ վերակացուի աշա-
կերտաց՝ վարձու կալեալ լինին ՚ի զանազան
ազգաց արք հմուտք , բարեբարոյք և լեզուա-

դէտք ; որք յամ ժամանակի չ մանկունս գո-
 լով՝ դէտ լինին վարուց նոցա ՚ի զըոյցս զանա-
 զան լեզուաց : Թիւ ձրիավարժ աշակերտաց
 ճեմարանիս սահմանեալ է լինել երեսուն կմ
 թէ առաւել՝ քառասուն , որոց տասունք միշտ
 լինելոց են զաւակք աղքատ եկեղեցականաց հա-
 յոց և ինքեանք քահանայացուք կմ վարդապե-
 տացուք • իսկ մնացելքն՝ որդիք աղքատ աշխաբ
 հականաց մերոց • զայսպիսի որդեգիրս ընտրէ
 և ընդունի խորհրդարանն ճեմարանիս , որոց
 անմիջական անդամք են երեք որդիք և երեք
 փեսայք նոյն Տեարց Լազարեանց , Աարգավա-
 բըն և այլ զօրագլխապետք • իսկ պատուանուն
 անդամք են ծայրագոյն Պատրիարգն ամ հայոց
 և վիճակաւոր Աբբեպիսկոպոսք հայոց վրաստա
 նի և ռուսաստանի : Բաց ՚ի ձրիավարժ աշա-
 կերտաց ընդունի ճեմարանս ՚ի հայոց և յօ-
 տար ազգաց , զայլ լիաթ ոշակ , կիսաթ ոշակ և
 զերթե եկ աշակերտս , յորոց առաջինք՝ վա միոց
 ամի հատուցանեն զ750 ռքլիս • երկրք՝ զ450
 և երրք զ250 : Չրիավարժ որդեգիրք՝ ընկա-
 լեալ լինին ՚ի ճեմարան ՚ի 10 ամաց հասակէն
 մինչև 914 , որք ՚ի մտանելն իւրեանց՝ պարտին
 չ ինքեանս բերել զաղերսագիրս և զվիայագի-
 բըս զօրինաւոր ծննդենէ իւրեանց զմկրտութե-
 նէ և զախտանալոց բնական և պահպանող պի-
 սակաւ ծաղկի՝ ստորագրեալ ՚ի բժշկէն :

Առարկայք ուսմանց և դիտութեանց

՚ի ճեմարանիս յայժմեան լի -

ճակի ևն սոքին :

- | | |
|-----------------------------------------------------------|-----------------------------|
| 1. Լեզու հայոց . | 12. ալիէպրա . |
| 2. Լեզու ռուսաց . | 13. երկրաչափութի . |
| 3. Լեզու գաղղկացւոց . | 14. բնագիտութի . |
| 4. Լեզու գերմանացւոց . | 15. գեղագիտութի . |
| 5. Լեզու լատինաց . | 16. հոգեբանութի . |
| 6. կրօնագիտութի քրիստոնէական լի հայոց և ռոմաց դաւանութի . | 17. տրամաբանութի . |
| 7. քերականութի ՚ի հինգ լեզուս . | 18. բարոյագիտութի . |
| 8. ճարտասանութի ՚ի հինգ լեզուս . | 19. պատմութի եկեղեցական . |
| 9. պատմութի ըհանուր քաղաքական . | 20. անճաբանութի հաւատաճառ . |
| 10. աշխարհագրութի . | 21. վայելչագրութի . |
| 11. թուաբանութի . | 22. նկարագրութի . |
| | 23. կարաւուսն : |

Բայ ՚ի սոցունց ՚ի կանոնագրութեանս ճեմարանին՝ որ տալիլ է հայերէն, ռուսերէն և գաղղկերէն, նշանակեալ կան և այլ լեզուք և զանազան ուսմանք դիտութեաց, որոց դասատու-

ութիւն կախի զյաճախուէ ուսանողաց և ուսուցչաց : Աշակերտք ուսանին զամս եօթն . և յիւրաքանչիւր տմի զամիսս մետասան , և 'ի յուլիսի հանգստանան զբօսանօք . բաց 'ի կիւրակէից և հանգիսաւոր տօնից՝ յամ ւաւուրս ձգի ուսումն ժամս ութ . յառաւօտու 'ի 8 ժամէ ց' 12 . զկնի ճաշու յ2 ժամէ ց' 6 ժամն : Բաժանին աշակերտք 'ի չորս դասատունս . յորոց յիւրաքանչիւրսն մնան զրեթէ զամս 2 և ք չափոց զարգացմանն ամբառնան 'ի բարձր դասատուն , և անտի 'ի համալսարանն Այսերական : Ունին աշակերտք 'ի սլատրաստի զամ ուսումնական գործիս , զմատենաս գիտուեց , զգրիչ , զթուղթ , զճացոյց սլատկերս , զարուեստակերտ գունտս , զաղիւսակս , զգործիս նկարչուե , զմատենադարան , և զայլ նմանս : Այսպիսի կարևոր հանգամանօք զարդարել ճեմարանս՝ մարթի կարգիլ 'ի դասս երևելի մեծագործութեանց , ք որում յանձին բերէ զանբաժան կնիքս նոցունց , զցանցառուին իմն , զօգտակարուին , և զհարկաւորուին : Ընթերցել մեր զպատմուի ազգիս՝ գտանեմք այն զի բազումք 'ի հայոց կառուցեալ են զեկեղեցիս , այլք ըլքաղաքս , ոմանք զվանորայս , այլք՝ զայլ ինչ , սակայն բաց 'ի Տիխիսոց Ներսիսեան օգտակար գպրոցէն և տպարանէն , սակաւ տեսանեմք թէ 'ի մերայնոց ոք կանգնեալ իցէ ճեմարա

անշարժ եկամտիւք յաւերժացեալ և յոլոլուք
 լեզուաց, գիտունց, ուսուցչաց և գործնց հարս
 տացեալ. յորոց թէ քանի՞ անթիւ բարունք
 հոգւոց և մարմնոց զօրեն գետանալ յեկեղեցի և
 յազգ. հայոց՝ չէր ինչ դժուարին մարդարէա-
 նալ, եթէ տրամագրուի ազգին զուգաչափ ձայ-
 նակցէր նստատակի ճեմարանին և հիմնադրացն,
 այլ սակայն փորձն ցուցանէ թէ ազգ մեր տա-
 կաւին չէ այնչափ բորբոքեալ հրով լուսաւոր
 գիտունց հաւասար այնց ազգաց, յորոց միջև
 բնակէ, և տացէ Տէր զի օր լք օրէ ընդունե-
 լով զօգուտ և զլուսաւորուի այսր ճեմարանի
 ղդ ընդ մեծահարուստ և գերօգտակար տղա-
 րանի սորին, ևսև այլոց դպրատանց, հուսկ
 ուրեմն մտցէ ՚ի շարս այլոց լուսաւորեալ ազ-
 գաց, որ այժմ ծաղկին յեւրոպիա ամենայն
 կենցաղօգուտ գիտութեամբ և իմաստու
 թեամբք :

Վ Լ Խ Ճ Ը Ն :



Յ Ա Ն Ա

Գլխաւոր առարկայից պարունակէ
 ւոյ յէջիմբրակէիս :

Երէ՛ս .

Նախերգութիւն	3.
Յառա՛գս անճորտր աստեղաց	8.
Յառա՛գս հայեցողաւծոց ճորտրահաց	10.
Յառա՛գս հայեցողաւծոց 12 հենդանահերպից	11.
Յառա՛գս երկնայնն համաստեղութեանց	12.
Յառա՛գս խաւարճան արեգահամեաւ լուսնի	17.
Յառա՛գս աստուտր աստեղաց	21.
Յառա՛գս գոշահամեա ճշմոջէնաստր արեգի	25.
Յառա՛գս ճշմոջէնաստր գոշահամեա եղանակաց	59.
Յառա՛գս 12 հենդանահերպից	87.
Յառա՛գս էօնն ճորտրահաց	91.
Յառա՛գս ներգործութեաց պատահելոց յ12 աստր	101.
Յառա՛գս ճանդեան լուսնի	126.
Յառա՛գս որսանութի լուսնի, ղորպիտութեան նորին՝ որ ճանդի յայնժամ	129.
Յառա՛գս խաւարճան աստեղաց	132.
Յառա՛գս գիտաստր աստեղաց	135.

- Յաղագս Հողմոց և անձրևաց 136.
 Յաղագս Բնաշինութեան Ծառաբանաց և Տառնաց 150.
 Յաղագս Բուսնաբանութեան Հայոց 168.
 Յաղագս Գործարարական Կրթության Կարևորութեան 184.
 Յաղագս Գրքի Կարևորութեան, Երկրագործական Կրթության Կարևորութեան 192.
 Յաղագս Կրթական Կրթության Կարևորութեան և Կրթական Կարգի 195.
 Յաղագս Ծննդաբանության և Ընտանեկան Կրթության 259.
 Յաղագս Ծառաբանության 278.
 Յաղագս Երկրագործական 300.
 Յաղագս Ընտանեկան Երկրագործական 327.
 Յաղագս Երկրագործական Գրքի Կարևորութեան և Կրթական Կարգի 335.
 Յաղագս Բնաշինութեան Կարևորութեան և Ընտանեկան 339.
 Յաղագս Երկրագործական Կարևորութեան և Կրթական 349.
 Յաղագս Ընտանեկան Կրթության Կարևորութեան 354.
 Յաղագս Ծննդաբանության, Ընտանեկան, Երկրագործական, Կրթական 358, 359.
 Յաղագս Բնաշինութեան Կարևորութեան և Կրթական 359.
 Յաղագս Կրթական և Կրթական Կարևորութեան և Կրթական 366.
 Յաղագս Կրթական Կարևորութեան և Կրթական 367.
 Յաղագս Ընտանեկան Կրթական 369.
 Յաղագս Կրթական Կարևորութեան և Կրթական 369.
 Յաղագս Կրթական 374.
 Յաղագս Կրթական Կարևորութեան և Կրթական 389.
 Յաղագս Կրթական Կարևորութեան և Կրթական 404.


- Յաղագրութեան արարչաց 427, 432, 450.
 Յաղագրութեան գաղափարներ համեմատաց 434, 446, 447.
 Յաղագրութեան յիշատակարարական արարչութիւն 427.
 Յաղագրութեան ուղեցրածութեան 428, 438, 454.
 Յաղագրութեան ստորագրութիւն, ընդաց կարգադրութիւն 428.
 429, 434, 434, 436, 437, 453, 442, 443.
 Յաղագրութեան համեմատարարութեան արարչութիւն 428, 438.
 Յաղագրութեան զարգացման արարչութեան 428, 434, 432.
 Յաղագրութեան զարգացման արարչութեան 443, 446, 450.
 454, 455.
 Յաղագրութեան արարչութեան սրբութիւն 429.
 Յաղագրութեան ընդհանրութեան կարգադրութիւն 432, 438.
 429, 446, 447.
 Յաղագրութեան կարգադրութեան հիշատակարարութիւն 454 430, 434.
 429, 443, 445.
 Յաղագրութեան զարգացման արարչութեան 429, 434, 437.
 Յաղագրութեան ճշմարտութեան կարգադրութիւն 434, 445.
 429, 447, 456, 457.
 Յաղագրութեան հերթաբերութեան 429, 452, 459.
 Յաղագրութեան իշխանութեան 430.
 Յաղագրութեան հերթաբերութեան արարչութեան 430.
 Յաղագրութեան թիւերի արարչութեան արարչութեան 430, 434.
 Յաղագրութեան գաղափարականութեան 430 436, 444, 454.
 454.
 Յաղագրութեան յիշատակարարութեան 430.
 Յաղագրութեան ընդհանրութիւն 430.
 Յաղագրութեան շնորհաբերութեան 432, 438, 446, 455.

- Յուզմութն այստեղից 432, 434, 439.
 Յուզմութն զինքաց փառաբանութիւնք . . . 441, 432.
 Յուզմութն ի շնորհաց ցաւոյն 433.
 Յուզմութն զքրտոց ցաւոց 434, 442, 445,
 454.
 Յուզմութն արեւմտեան լեւան . . . 434, 442, 459.
 Յուզմութն արեւմտեան զինք 435.
 Յուզմութն զինքաց 435, 440, 449, 450.
 Յուզմութն արեւմտեան զքրտեւոյ 436, 447.
 Յուզմութն արեւմտեան զինք 438.
 Յուզմութն զարեւմտեան ցաւոց . . . 439.
 Յուզմութն արեւմտեան ցաւոց . . . 439, 449, 454.
 Յուզմութն արեւմտեանց . 439, 444, 449, 450, 452,
 454.
 Յուզմութն արեւմտեան . . . 439, 444, 445, 454.
 Յուզմութն արեւմտեան ցաւոց 439, 442.
 Յուզմութն զարեւմտեան ցաւոյն . . . 440, 444, 442.
 Յուզմութն արեւմտեան լեւան . 440, 445, 446, 460.
 Յուզմութն արեւմտեան (արեւմտեան) . . . 440.
 Յուզմութն զարեւմտեան արեւմտեան . . . 440, 444.
 Յուզմութն զարեւմտեան արեւմտեան . . . 440, 444.
 Յուզմութն արեւմտեան զինք 442, 446, 447,
 450, 454, 459.
 Յուզմութն արեւմտեան լեւան արեւմտեան . 442, 444, 450.
 Յուզմութն արեւմտեան 443, 456.
 Յուզմութն ի տարեկան, ի տարեկան ի ճշման արեւմտեան 444, 454, 452.


- Յաղագս արհեստանորոն-Լեւն 444.
- Յաղագս իցանաց 444, 446.
- Յաղագս հայծէղան 446.
- Յաղագս շէրդի 446, 453.
- Յաղագս Լոսոց 446, 450, 454, 455.
- Յաղագս Ջրջրո-հի (սօլօսու-նայի) 449.
- Յաղագս հրատարակ արեւրի 450, 458.
- Յաղագս հարուածոց օջից 452.
- Յաղագս շո-սնորոն-Լեւն 452.
- Յաղագս Բաբարճան արարի 452, 454.
- Յաղագս Բժշկէլոյ զԼեւն-նա-որեւն . 454, 457.
- Յաղագս ցաւոց աստմանց 454.
- Յաղագս արժուարմամբոն-Է 456.
- Յաղագս անուանց և սանահոն-Է շաքոց . . 464.
- Յաղագս հաշիւմարդսն, (հօլէրի) 462.
- Յաղագս Արսէպոյ հայոց 494.
- Յաղագս հայոց Ճիմարանի Տեարց Լաւարեանց . 490.



Գլխաւոր շնորհակէտ արարողութիւն



Երեւ	Տող	Սեւ	Ուշիշ
199	20	6 օր	6 շաբաթ
200	4	սեպտ 28	22
204	24	յունիսի 46	19 հիւրակի
207	14	դեկտ 49	29 չորեքշաբթ
208	26	երեք շաբթ	շաբաթ
220	27	սեպտ 12	43
233	2	յուլի 26	49
233	3	2 շաբթ	երեք շաբթ
244	6	6 օր	5 օր




Ի բաց թողեալ է յերեսն

199 . 22 . Օգոստոս 34 օրէ կշի մասնէ :



W. J. O. H. G.



200

